




Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

6. «ԱԼԹԸ ԶԵՄԱԱԹ» ԵՎ «ՕԽՅԸ ՕԴԱԱՐ»

Այսպես կազմվեցավ Պոլսո հայ կորիզը, և այսպես սկսան հայերը հետզհետե համախմբվիլ եկեղեցիներու շուրջ, կամ ավելի ճիշտ՝ իրենց համախմբված վայրերուն մեջ աղոթատեղիներ սկսան ճարել իրենց, և որովհետև արտոնված չէին իրենց սեփական եկեղեցիները կառուցանելու, օտար եկեղեցիներ ապահովել, թուրք իշխանութանց իսկ հոժարութեամբ:

Օրմանյան կրսե, թե Պոլսո առումեն յոթը-ութը տարի հետո հետզհետե բերված կամ եկած գաղթականությունները հայաբնակության լավ բազմություն մը կազմած էին, և Յաթիհ զանոնք հետզհետե կղեկներ քաղաքին պարիսպներուն ներքև կարևոր դռներուն մոտերը, թե՛ Մարմարայի ծովեզերքին, թե՛ ցամաքակողմի գիծին և թե՛ Ոսկեղջյուրի եզերքներուն ուղղությամբ, որոնք ռազմագիտության և ապահովության տեսակետեն մեծ կարևորություն ունեին, և ուր հարմար չէր նկատվեր պահել հույն տարրը¹⁵⁹:

Ըստ Հրանտ Ասատուրի, Յաթիհ հրամանով Գարամանեն բերված հայերուն իբր բնակավայր Սամաթիան հատկացվեցավ, ուր անոնք բնակեցան Ղասդրիա մենաստանին

առջև գտնվող անտառի մը մեջ, վրաններու տակ և հետո է, որ եկեղեցվո շուրջը քիչ-քիչ տուններ շինեցին¹⁶⁰: Անոնք սկիզբը ապրած են այնպիսի վատթար պայմաններու մեջ, որ քիչ հետո ժանտախտի մեծ համաճարակի մը զոհ գացած են անոնցմե շատեր¹⁶¹:

Ղալաթիային ու Սամաթիային հետո, ուր հայեր կորիզ կազմած էին եկեղեցիներու շուրջ, Պալաթն է, որ հայեր համախմբեց իր ծոցը, էդիրնեբափուի Ս. Նիկողոս եկեղեցվո շրջանակները:

Յաթիհի շրջանին Պոլսո մեջ գտնված հայ թաղերը ճշտելու առթիվ մեզ օգնության կհասնին Յաթիհի կողմի շինել տրված մըզկիթներուն «վաքեֆնամե»-ները: Յաթիհի կողմի մզկիթի վերածված Այա-Սոֆիայի «վաքեֆիյե»-ն չէ հասած մեզի: Փոխարեն, Պոլսո դիվանատուններուն մեջ երևան հանվեցան էյուր-Սուլթան և Յաթիհ մզկիթիներուն «վաքեֆիյե»-ները: Այս վերջին մզկիթին «վաքեֆիյե»-ները, զորս հրատարակեցին Թահսին Օզ 1935-ին և Օսման էրգին 1945-ին, կհիշեն վեց հայ թաղեր՝ էրմենի Բազմենո մահալլեսի, էրմենի էթմեքճի Անդրեա մահալլեսի, էրմենի Հաջիգեր մահալլեսի, էրմենի Շադիրեյ մահալլեսի, էրմենի Ֆենավեյ մահալլեսի և էրմենիյան մահալլեսի:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի Պ թ-ից, ԺԲ-ից և 1963 թվականի Պ Պ Ա-ից, Բ-ից և Գ-ից:

¹⁵⁹ «Ազգապատում», Բ, էջ 2154:

¹⁶⁰ Հ. Ասատուր, «Ընդարձակ օրացույց», 1901, էջ 81—82:

¹⁶¹ Գ. Հեասեր, «Բազմավեպ», 1928, էջ 210:

Արձանագրելով թաղերու այս անունները, որոնցմե ռմանք իսկապես անվերժանելի կմնան, Գրիգոր Ապառաջյան հետեւյալ դիտողությունները կկցեց. «Այստեղ հիշված անունները նորություններ են մեզի համար և այդ պատճառով կարելի չեղավ առայժմ ճշտել այդ անուններուն պատմության հետ ունեցած աղբյուրը, թե այս հայերը—որոնցմե մին իսլամական անուն կկրե—ուրկե՞ և ի՞նչ առիթով եկան իսթանպուլ և ի՞նչ պատճառներ գոյություն ունեին անոնց անուններով մկրտելու քաղաքին մեջ հայոց հատկացված առաջին թաղերը: Ֆաթիհի «վաթֆիյե»-ի օրինակներուն մեջ միայն ասոնք են, որ կհիշվին իբրև հայոց թաղեր, բայց մենք կենթադրենք, թե կային նաև այսօրինակ ուրիշ թաղեր ալ, որոնք աղբյուր չունենալով Ֆաթիհի կտակած կալվածներուն հետ, չեն հիշված «վաթֆիյե»-ին մեջ: Նույնպես ուշագրավ պարագա մըն է այդ թաղերին միույն «էրմենիյան մահալլե-սի» (Հայոց թաղ) անունը կրելը, մինչ մյուսները կկրեն հայ անհատներու անունները: Դժբախտաբար կարելի չեղավ որոշել անոնց քաղաքին որ մասերուն մեջ գտնվիրը»¹⁶²:

Ավելցնենք մենք ալ մեր կարգին, թե պետք չէ դարմանալ իսլամական անուններ գտնելով հայոց մեջ: Դրիմի հայերը հաճախ կրած են նման անուններ, ինչպես որ շարունակած են կրել Դրիմեն գալով Գալիցիա և Մուդուլա հաստատված հայ գերդաստաններին շատերը: Մեր պրպտումներու ընթացքին Մուդուլայի, մինչև անգամ Տրանսիլվանիո մեջ հաճախ հանդիպած ենք ոչ միայն թաթարական ծագում ունեցող աղգանուններու (Ասլան, Չոմաթ, Չուլաթ, Թոսուն, Լաթիֆ, Խոնդեթար, Խուդավերդի, Ալթուն, Աղբեյ, Հուլուբեյ, Ուլուբեյ, Յուլբեյ, Էդիրբեյ, Օղբեյ, Խուլթուբեյ, Լարիբե և այլն), այլև ըլլա արական ըլլա կանացի մկրտության անուններ ալ, որոնք նույնպես թաթարական են (Ամիրա, Թամուր, Խոլխարար, Դուվլաթ, Մելիբ, Մուրադ, Սինան, Ազիզ, Աղաջան, Խաթուն, Խանում, Յահութ, Զմրութ, Թուֆան, Արմա և այլն): Եվ ինչ որ ավելի բնորոշ է, Շատիբեյ անունը, որուն կականարկե հավանաբար հոգվածագիրը, անունն է ծանոթ հայ գերդաստանի մը, որ նույնպես Դրիմեն կսերի և հասած է մինչև մեր օրերուն: Ֆաթիհի «վաթֆիյե»-ին մեջ հիշված «էրմենի Շատիբեյ մահալլեսի»-ն կրնա այսպես կոչված ըլլալ 1475-ին Դրիմեն բերված հայու մը անունով: Կրնա նաև ան Պոլիս եղած ըլլալ ավելի կանուխ և ըլլալ այն հայ երեւելին, որուն նվիրելու համար էր, որ Ամիրդովլաթ Ամասիացին հորինեց իր «Ուսումն բժշկութեան» անուն երկը 1459-ին, «ի

վալելումն պարոն Շատիպէկին, որդոյն պարոն Վարդին»:

Ճարտարապետ Ալի Սաիմ Ուլգեն ժն և ԺԶ դարերու հատուկ Ֆաթիհի «վաթֆիյե»-ներուն մեջ 'Լալաթիո կողմը հիշատակված կգտնե կարգ մը թաղեր, առանց կարենալ ճշտելու անոնց ներկա վայրը: Այդ թաղերուն մեջ են էրմենի շքմեքի Անդրեա մահալլեսի, էրմենի Վաղմիսուր մահալլեսի և էրմենիյան մահալլե-սի¹⁶³:

Արդ, սույն երեք թաղերը կերևան Ֆաթիհի մզկիթին «վաթըֆ-ներուն մեջ ևս, «Պաղմի-նուր»-ը «Պաղմենու» ձևով, ինչ որ ցույց կուտա, թե հիշյալ մզկիթին կապված «վաթըֆ»-ներուն մեջ 'Լալաթիո երեք հայ թաղերն ալ կային:

Ժամանակի ընթացքին հայերը ցրվեցան Պոլսո զանազան թաղերուն մեջ, բայց իշխանությանց աչքին սկզբնական Ալթընմաթն (վեց հասարակություն) էր հայության կորիզը, և անոնք չին, որ հայ համայնքը կներկայացնեին պաշտոնապես: Այդ վեց հասարակությունց գլխավորներն էին, զորս պետությունը կանշնար իբրև հայոց գլուխ, և անոնց հաճությամբն էր, որ կընտրվեր նոր պատրիարքը: Այնպես որ Ալթընմաթ բառը նվիրագործված մնաց Պոլսո հայ համայնքը հատկանշելու համար և զայն գործածված կգտնենք անցյալ դարու սովորական ֆերմաններուն մեջ իսկ:

Ֆաթիհեն երկու դար հետո Էվլիյա Չելբեին, ականարկելով Պոլսը բնակչության մեծ տեղի համար նույն սովորանին թափած ջանքերուն, կթվե Ռումելիի և Անադոլուի այն քաղաքները, ուրկե բնակչություն բերվեցավ Պոլիս և թաղերը, ուր զետեղվեցան անոնք: Էվլիյան շատ ալ վստահելի աղբյուր մը չէ, երբ մանավանդ կխոսի երկու դար առաջվան վրա: Այսուհանդերձ շահեկանութենն զուրկ չէ հիշել, թե Եվլիյային ու Սեբաստիային եկած հայերը կգետեղե Սուլումանաստըրի մեջ, իսկ առանց աղգություն հիշելու, բրուսացիները կգետեղե Էյուբ, քարամանցիները՝ Բյուլուբ քարաման, կոնիացիները՝ Բյուլուբ քարաման թաղերուն մեջ և այլն¹⁶⁴:

Ալթըն-նմաթի կողքին ժամանակի ընթացքին նվիրագործում պիտի ստանար նաև ուրիշ բառ մը՝ Օխտը օղալար, միշտ հատկանշելու համար թաղերը, ուր զետեղված էին հայերը Պոլսո մեջ: Օղալարը նույնինքն խումբն էր բնակարաններուն, ուր կապրեին հայերը տվյալ թաղին մեջ, և յոթն էին սկիզբը: Ու թեև անոնց թիվը շատցավ հետագա-

¹⁶³ Mimar Ali Sa'im Ülgen, „Fatih devrinde İstanbul (1453—1481), Ankara, 1939, p. 41.

¹⁶⁴ Էվլիյա Չելբեի, «Սէյահաթնամէ», Ա, էջ 128.

յին, բայց բառը՝ Օխտը օգալար, մնաց ժողովրդական գործածության մեջ:

2. Ղուկաս ինձիճյան հետևյալ կեդպեւ մեզ կպատկերացնեն Օխտը օգալարը:

«1. Կուրու կիւմրիւ օտալարի ի մաքսանոցի մերձ յետքէն՝ գափուսիին»:

2. Մալդա օտալարի ի Մալդա շարշուսին մերձ ի սուլտան Մեհմէտ:

3. Չարշէնայի օտալարի մերձ ի ֆէթհիէ ճամխին:

4. Թէֆիէ օտալարի ի տեղտը որ կոչի Քիւշիւ Մուստաֆա փաշա, ի ներքին կողմն Այա գափուսիին:

5. Քէօմիւրնի օտալարի ի գափուգ պաղարին ի փողոցի դարբնոց որ է մօտ ի Վէզիր խան և ի Օսմանիէն:

6. Ի ներքս կոյս Ախոո Գափուսին:

7. Ոմանք յաւելուն և զծօթներորդն որ ի Դոփխանէն, յանցանել ընդ խէնտէկն ի ճանապարհին որ ելանէ ի Տէօրթ եօլ աղզի Պէյօղլուին:

Այժմ ամենայն օտալարք են ի մէջ բնակութեանց տաճկաց որ է ցոյց ի վաղուց անտի բնակելոյ նոյն հայոց յայն տեղիս: ալ ալժմ փոխանակ նոցին՝ վեց ժողովրդեամբ իմանան զժողովուրդս ի թեմի 6 եկեղեցեաց հայոց յորոց 3 են ի քաղաքին, և 3 յարուարձանայս»¹⁶⁵:

Ինչպես ըսինք, հայ «օղալար»-ներուն թիւը աճեցաւ հետզհետե: Արպոյաճյան կըսե, թե Ղալաթիո և Բերայի մեջ 1500—1800 շրջանին հայերը բնակած են 12 «օղալար»-ներու մեջ, որոնցմէ մեկուն անունը Սարգիս է: Մյուս 11-ին անուններն էին Չևրեճի, Տափուտ, Երանոս, Մեհմէտի, Բաստումաճի, Փեշէկիրճի, Թեք-խուլուու, Տիպեք, Քերան, Չախմախ, Կյուրճուու Կարելի՝ է ենթադրել արդոք, կըսե Արպոյաճյան, թե «Սարգիս օղալար»-ը կապ մը ունի անհետ կորսւած (Ղալաթիո) Ս. Սարգիս եկեղեցւոյն հետ¹⁶⁶:

Խոսելով հայոց «օղալար»-ներուն մասին, ուրիշ հայ բանասեր մը կգրե. «Պատմութենէն գիտենք, թե հետ գրավման բերված գաղթականները զետեղվեցան հույներն պարպված շենքերու կամ պետական և անհատական ձեռնարկներով շինված օղալարներու մեջ: Թեև շատոնց կորսված են այդ օղալարներուն հետքերը և ճշտիվ չենք գիտեր, թե ինչ տեսակ շինվածքներ էին անոնք, սակայն այս մասին գոյություն ունեցող ավանդութենէն դատելով կրնանք ըսել, թե խեղճուկրակ խրճիթ-

ներու շարքեր էին անոնք, շինված սուղ ժամանակի մեջ, ժողովուրդը բացօդայ շէնքերու դիտավորությամբ և նման՝ այսօրվան գիշերաբույս տուներուն»¹⁶⁷:

Գրիգոր Ապաճյան թուրք աղբյուրներն քաղելով, երեսունի մոտ ուրիշ օղալարներ ևս կհիշե Պոստ զանազան թաղերուն մեջ, ընդունելով հանդերձ, որ «անոնցմէ ոմանց մեջ դուռներ, հրեաներ, հույներ, սերբեր, ալիալամներ, կընակեին», և որ «այդ օղալարներուն մեկ մասը շինված է հետ գրավման, իսկ մյուսներն ալ հետզհետե հաստատված՝ երբոր նոր-նոր գաղթականական ալիքներ եկած են հաստատվելու Իսթանպուլ»¹⁶⁸:

Այսուհանդերձ իր հիշած այդ օղալարներուն մեջ կհանդիպինք Եւմենի օղալարի մը Թոփքափուլի հայոց եկեղեցւոյ քով, և ուրիշի մը էյուբի կողմը, Իսլամբեյ թաղին մեջ: Մնացյալներին ոմանց մեջ ալ հայեր կրնան բնակած ըլլալ՝ նկատի ունենալով անոնց հարկանութիւնը հայ եկեղեցիներու:

Կարելի չէ ճշտել հայկական «օղալար»-ներուն ճշգրիտ սահմանը, որովհետև արդարեւ հայկական թաղեր միշտ շմանցին անոնք: «Օղալար»-ներէն շատեր ցրվեցան տարբեր թաղեր, ու երբեմնի հայ «օղալար»-ներուն մեջ հետզհետե թուրքեր եկան բնակիլ: Բայց «օղալար» կոչումը մնաց. զայն իրենց հետը տարին հայերը, երբ տեղափոխվեցան ուրիշ թաղեր. բառը սկսավ հատկանշել այլևս Պոստ բնիկ հայը համախումբ բնակած իր թաղերուն մեջ:

«Օղալարցի»: Այս բառը կապերն և մեր օրերուն: Կոչական մըն էր ան, որով կորակեին գոհհիլ դասը:

Մեր օրերուն «օղալարցի» էին, օրինակ, Բերայի ծայրամասի ժողովրդական Գաղերու հայերը, ղուլաբերեցին, ենիշեհիբցին ու գոնավուպցին, կամ անոնք, որ վաղեմի Պոստ ժողովրդական ինչ-ինչ թաղերը կընակեին դեռ, ինչպես սալամթումրուքցին և էդիր-նեքափուցին:

Կենթադրվի, թե նույնիսկ Պոստ առումին ատեն հայեր գոյություն ունեցած են Ղալաթիային ավելի վեր, Բերայի մեջ ևս, սակայն պատմական ոչ մեկ փաստ կարելի է գտնել այս մասին: Միայն սա ստույգ է, որ ժՁ դարուն, երբ եվրոպացիներ իրենց բնակությունը Ղալաթիային կփոխադրեին Բերա և հոն կհիմնեին եկեղեցիներ և դեսպանատուներ, հայերն ալ, դեսպանատուներու մեջ ծառայող խոհարար, դռնապան, սպասավոր և ալլն, բնակություն կհաստատեին Բերայի մեջ: Այդ ժամանակէն հետո հետզհետե կշատնար թի-

¹⁶⁵ 2. Ղուկաս Ինձիճյան, «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», Ե, Վենետիկ, 1804, էջ 115—116:

¹⁶⁶ Ա. Արպոյաճյան, «Պալաթի թաղի կազմութիւնը», «Երեզդարյան պատմութիւն Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ», Կ. Պոլիս, 1921, էջ 161—162:

¹⁶⁷ Գ. Ապաճյան, «Շողակաթ», 1954, էջ 71:

¹⁶⁸ Անդ, էջ 72:

վր հայերուն, բաղկացած ընդհանրապես գա-
վառացիներն, որոնք կգործեին իբր շրկիր,
պահապան, դռնապան, մշակ, դարբին, բեռ-
նակիր և այլն և կընակեին գլխավորաբար
օղալար կոչված տնականներու և խաններու մեջ,
կալաթա սերային սկսյալ մինչև Գոնավուպա-
յի կողմերը: «Այսօր Բալբբազարի այն փո-
ղոցը, որ կըացվի Ս. Երրորդութիւն եկեղեց-
վո դեմ, և կվերջանա անգլիական դեսպանա-
տան դռան առջև, կկոչվի Դուլու օղալար, որ
անշուշտ նույն ժամանակներն մնացած ա-
նուն մըն է: Իսկ Գոնավուպա Դիվրիկի նու-
նապիլ գյուղի անունով մկրտված թաղ մըն է,
ուր բույն դրած են խոտնավիցիները»¹⁶⁹:

«Պոլսո հայեկար»-ը առավելապես կապ-
եր այս նոր «օղալար»-ներուն մեջ և Պոլսո
տեղական բարբառը ղնելու համար մարդ
ստիպված է հետևիլ անոնց խոսակցական
լեզվին մնացած հետքերուն:

Թվական տվյալներ չունինք հայոց համ-
բանքին մասին Յաթիհի օրով: Հարեանցի
հիշված է միայն, որ Կաֆայեն բերված զաղ-
թականները, որոնց մեջ զգալի էր հայոց թի-
վը, տասնյակ հազարներու կհասնեին

7. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹՈՒՆԸ

Պոլսո հայ գաղութի պատմության հետ
կապված կարևոր խնդիրներն մեկն ալ Պոլ-
սո հայ Պատրիարքության հիմնարկության
հարցն է, դեպք, որ կոչված էր ճակատադու-
կան դեր կատարելու ոչ միայն Պոլսո հայ գա-
ղութին դարավոր կյանքին, այլև բովանդակ
հայ ժողովուրդի նորագույն պատմության
մեջ, որովհետև Պոլսո հայոց Պատրիարքու-
թյունը նաև ազգային կեդրոն պիտի հանդի-
սանար բովանդակ Արևմտյան Հայաստանի
հայության համար:

Դժբախտաբար այդ Աթոռին հիմնարկու-
թյան պարագաները լրիվ ծանոթ չեն մեզի,
որովհետև, ինչպես կըսե Օրմանյան, «Կոս-
տանդնուպոլսո հայաբնակությունը կամ լավ
ևս օսմանյան հպատակ հայությունը, յուր
հատուկ պատմագիրը չէ ունեցած, որ որոշա-
կի ցուցներ մեզի անոր առաջին ժամանակնե-
րուն հանգամանքները, և ստիպված ենք
կցկտուր ալնարկներով կազմել անոր նախ-
նական պատմությունը, մինչև որ հասնինք
այն ժամանակներուն, ուր գլխավոր դիրք և
կարևորություն ստացավ ընդհանուր հայու-
թյան հանդեպ»¹⁷⁰:

Արդարև, Պոլսո Պատրիարքության ծագ-
ման պարագաներուն շուրջ քանի մը ճշգրիտ

տվյալներ որսալու համար ստիպված ենք
ապավինիլ ձեռագրաց հիշատակարաններուն,
և սակայն անոնք ալ շփոթության կառնչոր-
դեն մեզ հաճախ: Դուլուն են մանավանդ և
շփոթ մեր գիտցածները հայոց գրաված դիր-
քին մասին մայրաքաղաքին մեջ, անոնց ու-
նեցած կապերուն մասին պետական շրջա-
նակներուն հետ, արքունիքին հետ կապ ունե-
ցող հայ դեմքերուն մասին պատրիարքու-
թյան հիմնարկության օրերուն, ինչպես որ
Ֆարեանցի են մեր ունեցած տեղեկություննե-
րը հայոց պաշտոնական դիրքին մասին Յա-
թիհի Պոլիս մտած պահուն:

Ինչպես որ Գրիգոր Ժ Զալաբեգյանց կա-
թողիկոսի օրով (1443—1465) տեղի ունեցած
անցքերուն վրա խոսելու ժամանակ, Օրմա-
նյան ստիպված է ընդհանուր բառերով գոհա-
նալ, երբ կարգը կուգա Պոլսո Պատրիարքու-
թյան հաստատման: «Նորություններ են, զորս
հետզհետե պատմությունը մեր առջև կհա-
նե այդ միջոցին,— կըսե,— և անոնցմե մեկն
ալ Կոստանդնուպոլսո մեջ նոր և մեծ Աթոռի
մը սկզբնավորությունն է, Պատրիարքության
անունով: Կոստանդնուպոլսո մեջ հայաբնա-
կության մը գոյությունը պատմությունն ալ-
կներև է, սակայն հնագույն ժամանակնե-
րու թեմակալ իշխանությունը տեղական և եզա-
կան ըլլալով, միևնույն քաղաքի մեջ մեկն
ավելի թեմակալ եպիսկոպոս չէր ըլլար, և
բոլոր վիճակի մը մեջ գտնվողներ միևնույն
եպիսկոպոսին կհնազանդեին, և նույն եկեղե-
ցին հոգևոր միաբնակություն կընդունեին:
Հետևապես հայերն ալ Կոստանդնուպոլսո
մեջ իրենց հատուկ եկեղեցական դիրք մը չու-
նեին, թեպետև քաղաքական դիրքին տիրա-
պետելու չափ թիվ և ազդեցություն ունեին,
բանակին մեջ մեծ ուժ կկազմեին, կայսերա-
կան թիկնապահ գունդին լավ մասն էին, բազ-
մաթիվ և քաջ զորավարներ ունեին, պալա-
տական պաշտոնյաներու շարքին կգտնվեին,
և կայսերական զահն ալ գրավելու կհաջո-
ղեին: Հունական Հայաստանի բնակիչներն ու
Պարսկական Հայաստանն փախստական-
ներն էին, որ այդ տարրերը կկազմեին: Որ-
չափ ալ Քաղկեդոնի խնդիրը՝ խտրի մը կզնե-
հույներուն և հայերուն մեջ, սակայն հայերը
կամ այն էր, որ ստիպյալ կհամակերպեին, և
կամ անհատաբար իրենց ինքնությունը կպա-
հեին, բայց Հայ եկեղեցի և հայ թեմակալու-
թյուն չկար, ոչ Կոստանդնուպոլիս և ոչ կայս-
րության ուրիշ կողմերը, Մեծ Հայքին և Փոքր
Հայքին զատ՝ ուր բնիկները հայերն էին»¹⁷¹:

Օրմանյան, այլուր, Պոլսո մեջ հայ Պատ-
րիարքության մը հիմնարկության մտածումը
Յաթիհի կողմե կկապե հույն տարրին կող-

¹⁶⁹ Գեորգ արհեստագետ Արսլանյան, «Հայ կին»,
1932, հունվար 1:

¹⁷⁰ «Ազգապատում», Բ, էջ 2186:

¹⁷¹ Անդ, էջ 2148—2149:

քին ուժեղ հայ համայնք մը ևս ստեղծելու անոր նպատակին հետ, որովհետև, կրսն, Շաշխարհակալ թագավորը հուլներուն կա-
ցութիւնը ճշտելն ետքը, մտածեց անոնց դիմացը ուրիշ քրիստոնեական տարր մըն ալ կազմակերպել, տարր մը, որ ավելի կապված էր իրեն տերութեան շահերուն: Բազմաթիւ հայ գաղթականութիւն մը փոխադրեց Կոստանդնուպոլիս քաղաքը, և զայն գետեղեց քաղաքին շուրջանակի թաղերուն մեջ, պարիսպներուն ներքև և գլխավոր դուռներուն մոտ: Միևնույն առիթով, իբրև առավել վրստահութեան միջոց, հուլները հավաքվեցան քաղաքին մեջտեղը, աշտարակներին և ամրութիւններին հետո:¹⁷²

Հայերը իր վստահութեան առարկան դարձնելն հետո այսպես, Ֆաթիհ չէր կրնար տատամսիլ անոնց համար ուրույն Պատրիարքութիւն մը հաստատելու իր մտածման մեջ:

Դժբախտաբար ժամանակակից հայ աղբյուրներ կպակսին մեզի մանրամասնութիւններ գիտնալու համար: Չկան նաև օտար աղբյուրներ: Հետագա պատմիչները հազիւ թե դեպքը կարճանագրեն ու կանցնին: Անոնք կրսն պարզապէս, թե Պոլսո գրաւումն հետո Մեհմեդ Բ հայոց պատրիարքին ևս տվաւ այն միևնույն իրավասութիւնները, զորս տված էր օրթոդոքս պատրիարքին:¹⁷³

Հիշելով հայ աղբյուրներու վկայութիւնը, թե Ֆաթիհ 1461-ին Բրուսային Պոլիս փոխադրեց Հովակիմ հայ եպիսկոպոսը և զայն պատրիարք կարգեց կայսրութեան բոլոր հայերուն, Բաբինգեր կրսն, որ ճեթն այս դեպքը տեղի չունեցաւ սուլթանին առաջին անգամ Բրուսային անցած ատեն, երբ ան իր բանակով Արեւելեան Անադոլու կողովել, պետք եղաւ, որ ան կատարվի Տրապիզոնի իր արշավանքին դառնալուն: Կարելի է ենթադրել, թե նոր պատրիարքին պարտականութիւններն ու իրավունքները հարկման էին անոնց, որոնք ճշտվեցան իր հուլն պաշտոնակցին համար:¹⁷⁴

Դժբախտաբար մեզի չեն հասած սուլթանական ֆերմանները, որոնցով Ֆաթիհ հուլն և հայ պատրիարքարանները օժտեց զանազան առանձնաշնորհումներով: Անոնք երևան չեկան ոչ հուլն և ոչ ալ հայ պատրիարքարաններուն մեջ և ոչ ալ թուրք պետութեան արխիւներուն մեջ գտնվեցան անոնց պատճենները: Հաճախակի հրդեհները, որոնց թատր եղաւ Պոլիսը, այնքան կարեւոր փաստաթղթերու հետ մոխրացուցած պետք է ըլլան զա-

նոնք ալ: Ինչ որ գիտենք առանձնաշնորհումներուն մասին, զորս սուլթանը շնորհեց երկու ազգերուն, պատրիարքարաններու հաստատման հետ մեկտեղ, անոնց դարավոր կիրարկութիւնն է Ֆաթիհի օրերին սկսյալ մինչև 1923 թվականի կողանի դաշնագիրը:

Այդ կետը կշեռն օրմանյան ալ, երբ կրսն, «թե՛ պետական և թե՛ պատրիարքական դիվաններուն հրդեհները շատ կարեւոր գիրեր ոչնչացուցած են, և այսօր չի գտնվիր սկզբնական արտոնագիրը, որով Մեհմեդ Ֆաթիհ վճռեց պատրիարքական իշխանութեան ձեռնհասութիւնները: Միայն իրարմե փոխանցվելով կազմված վերջին պաշտոնագիրերը, և գործածութեամբ պահված սովորութիւնները կգծեն այն ձևը, որ նախապէս 1453-ին կազմվեցաւ պատրիարքական իշխանութեան համար»¹⁷⁵:

Միայն հրդեհները չեն սակայն, որ չբացուցած են անցյալին մեզ մնացած այդ թանկագին նյութերը. անոնք զո՛հ գացած են նաև «հետագային կարգ մը անխիղճներուն ձեռքով կատարված կողոպուտներուն»¹⁷⁶:

Օրմանյան կկարծե, թե հայոց պատրիարքներուն տրված առանձնաշնորհումներուն ֆերմանները շատ ալ տարբերութիւն պետք չէ ունեցած ըլլան Հունաց Պատրիարքարանի տրվածին, որ հավանաբար «իբրև սկզբնատիպ ծառայեց հայերուն ալ տրված կամ օրինադրված ձևին»¹⁷⁷:

Ֆաթիհ մտքն պիտի չանցնէր սակայն հայ Պատրիարքութիւն մը հիմնել իր նոր մայրաքաղաքին մեջ, եթե հայ եկեղեցական կազմակերպութիւն մը արդեն գոյութիւն ունեցած ըլլար հոն: Եթե ատեն մը կենթադրվէր միայն նման կազմակերպութեան մը գոյութիւնը, հիմա արդեն բոլոր փաստերը կան զայն ապացուցանելու:

Օրմանյան, ակնարկելով Նիկողայոս եպիսկոպոսին, կգրե. «Այդ միջոցին տակալին որոշ և զատված վիճակներ չէին կազմված օսմանյան կայսերութեան զավառներուն մեջ, և Կոստանդնուպոլիս նստող պատրիարքներ, ընդհանուր թեմակալ կնկատվէին բոլոր կայսերութեան մեջ, և եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնք աստեանդ վանքերու կամ քաղաքներու մեջ կմնային, իբրև պատրիարքին փոխանորդներ կնկատվէին, և ոչ իբրև կական թեմակալներ»:

Մեր տեսութեամբ այդ դրութեան հետեանք պետք է նկատել մուրախաւս կոշումը, որով այսօր ալ օսմանյան կառավարութիւնը կճանչնա հայ թեմակալ առաջնորդները, մինչ բառին իմաստը պարզապէս պատվիրակ կամ

¹⁷² Օրմանյան, «Հայոց եկեղեցին», 1911, էջ 102:

¹⁷³ A. de Jonquière, «Histoire de l'Empire Ottoman», Paris 1881, p. 57.

¹⁷⁴ F. Babinger, «Manomet II le Conquérant», Paris, 1954, p. 238.

¹⁷⁵ «Աղգապատում», Բ, էջ 2153:

¹⁷⁶ Գ. Աղաբեյան, «Շողակաթ», 1953, էջ 256:

¹⁷⁷ «Աղգապատում», Բ, էջ 2154:

պատգամավոր կհնչե, և չի տար սեփական պաշտոն կամ իրավասութիւն վարող թեմականի գաղափարը»¹⁷⁸:

Օրմանյան ինք ևս շփոթութեան մեջ է: Ան որեւէ մեկին ավելի պետք է գիտնար, թե թրքերին պաշտոնագրերու մեջ մուրախխաւ բառը երբեք գործածված չէ հայոց առաջնորդներուն համար. այս բառը, որ արաբերեն թերխիս բային կուգա և «արտոնյալ», «արձակյալ», «լիազորյալ» կնշանակե, պաշտոնական գրութեանց մեջ կիրարկված է «պատվիրակ»-ի կամ «լիազոր ներկայացուցիչ»-ի իմաստով միայն, և այն ալ դիվանագիտական հարաբերութեանց մեջ առավելապես: Գալաթի հայ առաջնորդութեանց համար թրքերին մերխաւա բառը միայն գործածած են, թեև բառարանները մեզ շփոթութեան մատնեն հաճախ: T. X. Bianchi և J. D. Kieffer, օրինակ, այդ բառը բնավ չունին իրենց բառարանին մեջ (Փարիզ, 1850):

Միակեր օտար բառարաններին, որ ճշգրիտ բացատրութիւն կուտա, C. Barbier de Meynard-ի թուրքերին—ֆրանսերեն բառգիրքն է, որ մերխաւա բառին դիմաց կնշանակե. «պատվիրակ հայոց հոգևոր պետին. եպիսկոպոս, քահանա և երբեմն աշխարհաւոր. որ կվարե թեմ մը իբրեւ պատվիրակը պատրիարքին»:

Բայց ի՞նչ հարկ բառարաններուն դիմելու, երբ բառը ունինք պաշտոնական գործածութեանց մեջ: Ամենահին «բերաթը», որ մեզ հասած է և որով սուլթան Մուսթաֆա Գ Պաս-մաճյան Գրիգոր պատրիարքի ընտրութիւնը կվավերացնէ 1764 հունիս 3-ին, գալաթի հայ առաջնորդները կանվանեն մերխաւա բառով, ինչպես մերխաւալը բառը կգործածեն հայ առաջնորդական թեմերու համար¹⁷⁹: Նույն բառերը հավանաբար կիրարկված են անկե առջի պատրիարքներու բերաթներուն մեջ ալ, ինչպես որ գործածված են ավելի հետո: Նույն բառերը կգտնենք, օրինակ, Ստեփանոս պատրիարքին տրված բերաթին մեջ 1831 հոկտեմբեր 4/16-ին¹⁸⁰:

Մեր օրերուն, մերխաւան իշխանութեանց կողմէ գալաթի հայոց առաջնորդներուն տրված տիտղոսն էր:

8. ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿԸ

Պոյտ առաջին հայ պատրիարքն եղավ Հովակիմ եպիսկոպոսը: Անոր պատրիարք անվանման պարագաները, ինչպես ըսինք, լրիվ

ծանոթ չեն մեզի: Առաջին անգամ Չամչյանն է, որ քանի մը տեղեկութիւններ կուտա այդ մասին, հայտնելով, որ Հովակիմ նախապես առաջնորդ էր Բրուսայի, ուր ճանչցած էր զայն Ֆաթիհը և նույնիսկ խոստացած անոր հայերու գլուխ կարգել Պոյտ մեջ, եթե հաջողեի հույներին խել իրենց մայրաքաղաքը:

Ահա Չամչյանի համապատասխան հատվածը. «1453. Սոյն այս սուլտան Մէհմէտ յառաջմէնէ մինչդեռ ի Պրուսա էր, գութ ունէր ի վերայ ազգին հայոց, և ի վերայ առաջնորդի տեղւոյն՝ որ կոչուի Յովակիմ եպիսկոպոս: Եւ յաւուր միտմ ի խօսիլ նորա ընդ նմա, և յասել ցնա առաջնորդին, բարձրացուցէ Տէր զթագաւորութիւն քոյ քան զամենայն, խոստացաւ նմա սուլտանն, և ասէ. եթէ յաջողեսցի ինձ առնուլ նաև զԿոստանդնուպոլիս՝ տարայց զքեզ անդր հանդերձ մեծամեծօք հայոց և արարից զքեզ գլուխ նոցա: Ապա իբրև էառ զայն, և հաստատեաց անդ զթագաւորութիւն իւր, յետ ամաց ինչ յորժամ դէպ եղև նմա գնալ ի Պրուսա, յիշեալ զխոստումն զոր արարեալն էր, եբեր անտի ի Կոստանդնուպոլիս զՅովակիմ եպիսկոպոս հանդերձ քանի մի երևելի տամբը հայոց (զոր ոմանք վեց տուն ասեն). ի թուին Հայոց ԶԺ. և ետ նոցա տեղի բնակութեան՝ ոմանց ի ներքս ի քաղաքն, և ոմանց ի Ղալաթիս, ուր արդէն կային բազում հայք. եբեր և ի Գաղատիոյ զշորս տունս հայոց: Եւ զՅովակիմ եպիսկոպոս արքունի նամակաւ կացուցեալ առաջնորդ կոչեաց զնա փաթրիկ, այսինքն պատրիարք. տունալ նմա իշխանութիւն տիրելոյ ի վերայ հայոց եղելոց ի Յունաստան և յԱնատոլիա: Եւ անտի սկսեալ տեւէ ցարդ յաջողութիւն այն պատրիարքութեան ի Կոստանդնուպոլիս»¹⁸¹:

Այս տեղեկութիւնը Չամչյանի զատ ոչ մեկ հայ կամ օտար աղբյուր կարճանագրե սակայն, և կասկածի տակ ձգողներ կան հետեւաբար անոր վավերականութիւնը¹⁸²:

Ինչ որ կկնճոտե սակայն հարցը, այն պարագան է, թե քանի մը Հովակիմներ կցցեն մեր դեմը հիշատակարանները և դժվարութեան առջև կդնեն մեզ, անոնց մեջեն զատելու համար Պոյտ պատրիարքը:

Բերիայի կամ Բերայի եպիսկոպոս Հովակիմ մը հանդիպեցանք, ինչպես հայտնի է, այն պատվիրակութեան մեջ, զոր Կոստանդին Զ վահկացի կաթողիկոսը կազմած էր 1483-ին Փլորենտիայի ժողովին մասնակցելու համար: Հովակիմ եպիսկոպոս մը հիշված է 1439-ին

¹⁷⁸ «Աղգապատմութիւն», Բ, էջ 2187:

¹⁷⁹ Ավետիս Պրալեյան, «Պատմութիւն Հայոց», Կ. Պոլիս, էջ 227—233:

¹⁸⁰ Անդ, էջ 222—227:

¹⁸¹ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 500:

¹⁸² Ա. Ալթոյանյան, «Բրուսայի շրջանի հայերը», «Էջմիածին», 1959, էջ 40:

սկսյալ իբր «արհիեպիսկոպոս Կոստանդնուպոլսի», ուրիշ Հովակիմ մը 1445-ին Կուտինա-Ռուսա շրջանին մեջ և շորորդ մը 1469-ին իբր Ֆիլիպեի եպիսկոպոս:

Արդ, մինչև այսօր ալ բանասիրության համար շուտաբանված կմնա, թե այս բոլոր Հովակիմները նույնն են այն Հովակիմին հետ, որ Կոստանդնուպոլսո պատրիարք ընտրվեցավ 1461-ին, կամ թե այդ դանազան Հովակիմ եպիսկոպոսներն ո՞րն էր, որ Պոլսո անդրանիկ պատրիարքն եղավ:

Արդարև, Փլորենտիայի ժողովին վավերագրերուն համաձայն, Կոստանդին Ե կաթողիկոսը 1438 հուլիս 15 թվականով Թեոդոսիո հայոց ուղղած իր գրության մեջ կըռեր, թե «ես իմով լի և կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգսի վարդապետի, որ և եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին և Մարկոսի և Թովմայի վարդապետաց և Յովակիմայ եպիսկոպոսի Բեռիայի, զի երթիցեն ի ժողովն և լուսատու լիցի նոցա Հոգին Սուրբ»¹⁸³:

Սույն Հովակիմին համար ուրիշ տեղեկություն չունինք: Ինչպես տեսանք նախընթաց գլուխի մը մեջ, հավանական էր, որ Բերայի հայոց եպիսկոպոսն էր ան և ոչ Բերիայի, և իր այդ հանգամանքին համար էր, որ կաթողիկոսը զայն դրավ Կաֆայի պատվիրակության մեջ:

Հովակիմը, որ իբրև «Կոստանդնուպոլսո արքեպիսկոպոս» կհիշվի 1439-ին, մեզ ծանոթ է, ինչպես տեսանք նախընթաց գլուխի մը մեջ, ձեռնադրությանց գրքն մը, որ այդ թվականին ընդօրինակված է իրեն համար¹⁸⁴:

Հաջորդ Հովակիմը կգտնենք Քյոթահիա պահված արձանագրության մը մեջ, ուր կըսվի, թե գրված է 1445 թվականին, «ի հայրապետութեան Տեառն Կարապետին և յեպիսկոպոսութեան Տեառն Ովակիմայ»¹⁸⁵:

Բրուսայի մեջ Հովակիմ եպիսկոպոս մը հիշողը Չամչյանն է միայն¹⁸⁶ և ուրիշ աղբյուրն այդ մասին որևէ տեղեկություն կապակի մեզի, թեև անհավանական չէ, որ Քյոթահիո առաջնորդը իսկապես գտնված ըլլա այնտեղ Պոլսո գրավման օրերուն:

Հովակիմ մը վերջին անգամ հիշատակված կգտնենք Ֆիլիպեի մեջ 1466—1469 թվականներուն, Ամիրզովայի «Յօգուտ բժշկութեան» աշխատության հիշատակարանին մեջ¹⁸⁷:

Օրմանյան տրամադիր է դանազան այս Հովակիմները բերել զետեղել Պոսո պատրիարքին անձին մեջ, նույն անձը համարելով նախ Կուտինայի, Բրուսայի և Ֆիլիպեի մեջ հիշատակված Հովակիմները և դանոնք Պոլսո անվանվող Հովակիմին հետ նույնացնելով, որովհետև, կըսե, «այդ հիշատակարաններն զժվար չէ հետեցնել, թե Հովակիմը՝ օսմանյան պետության ներքև գտնվող հայերու առաջնորդն էր, համապատասխանելով օսմանյան սուլթաններուն տեղափոխությանց, որ ինչպես գիտենք, սկսան Սյոյուսլու Կուտինայի մոտերը, անկե անցան Բրուսա, անկե Անդրիանուպոլիս, անկե Կոստանդնուպոլիս, և Հովակիմ եպիսկոպոս ալ նույն պարունակությունց մեջ տեղափոխություններ կատարեց»¹⁸⁸:

Թերևս առարկություն չվերցնեն միևնույն Հովակիմին սույն տեղափոխությունները, բայց անհեթեթ է դանոնք կապել օսմանյան գահուն տեղափոխությանց հետ, որոնք մեկուկես դարու շրջան մը կընդգրկեն:

Օրմանյան հետո կավելցնեն, թե «անունի նույնությունը միտք կձգե Հովակիմ եպիսկոպոսը, որ 1438-ին Կաֆայե Հոռոմ գացող պատվիրակության մեջ կգտնվեր»:

Օրմանյան, հիշելի հետո Ֆաթիհի և Հովակիմի միջև Բրուսայեն իսկ ժանոթություն մը գոյություն ունենալու պարագան, կխոստովանի սակայն, թե չի կրնար վավերական աղբյուրներով ճշտել այդ կետերը և դիտել կուտա, թե ամեն պարագայի մեջ Հովակիմի ստացածը նոր պաշտոն մը չէր, թե ան արդեն Արևելյան Փոքր Ասիո և Հարավային Եվրոպայի օսմանյան գավառներուն առաջնորդն էր, և ինչ որ Ֆաթիհի կստանար, պատրիարքի տիտղոսն էր միայն և իր իրավասությանց նվիրագործումը¹⁸⁹:

Բարզեն եպիսկոպոս նույն կարծիքն է, և ընդհակառակը, դիտել կուտա, թե «Սրբազրութեան և ուղղության կարոտ ուրիշ կետ մըն ալ Օրմանյանի այն ձգտումն է, որով զանի մը ժամանակակից Հովակիմները կուզեն նույնացնել Կոստանդնուպոլսի առաջին պատրիարք Հովակիմի հետ, պարզապես տարվելով անուններու նույնութենեն, առանց պատմական հիմքի և թվիքի»¹⁹⁰:

¹⁸³ Հ. Աղեքսանդր Պալեյան, «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայո», էջ 88:

¹⁸⁴ Բարզեն եպիսկոպոս, «Հանդես ամսօրյա», 1924, էջ 432—441:

¹⁸⁵ Այս արձանագրության պատճենը, զոր վահրամ եպիսկոպոս Մանկունի քաղած է Քյոթահիո Ս. Աստվածածին եկեղեցիէ Քյոթալուկեն, ներկայիս պահված է Փարիզի Պոզոս Նուպար մատենադարանին մեջ (Ա. Ալպոյաճյան, «Պոլսո Պատրիարքության ծագումը», «Հայաստանի կոչնակ», 1936, փետրվար, էջ 34:

¹⁸⁶ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 500,

¹⁸⁷ «Հանդես ամսօրյա», 1899, էջ 108—112:

¹⁸⁸ «Աղագապատում», Բ, էջ 2155:

¹⁸⁹ Անդ, էջ 2156:

¹⁹⁰ Բարզեն եպիսկոպոս, «Կոստանդնուպոլսի Հայ Պատրիարքության ծագումը», «Հանդես ամսօրյա», 1924, էջ 439—440:

Այնուհանդերձ Բարգեն եպիսկոպոս ինքն ալ տրամադիր է Բրուսայի Հովակիմը Պոլսո պատրիարք բերելու. «Հովակիմ արքեպիսկոպոս նախապես առաջնորդն էր Բրուսայի և այդ առթիվ ծանոթացած Ֆաթիհին և շահած անոր համակրանքը և հետո՝ Բրուսայի առաջնորդութենեն կոչված է Կոստանդնուպոլսի առաջնորդության, և այդ պաշտոնի վրա կգտնվեր 1430-ին (ուղղե՝ 1438-ին), այսինքն Կոստանդնուպոլսի առաջնորդական տառերինց տարի հառաջ. այնպես որ, երբ Ֆաթիհ առաջ զԿոստանդնուպոլսիս 1453-ին, իրեն ծանոթ Բրուսացի Հովակիմ եպիսկոպոսը արդեն Կոստանդնուպոլսի առաջնորդն էր 15 տարիներ ի վեր, և Կոստանդնուպոլսո գրավումեն ուրբ տարի ետքը Ֆաթիհ կատարեց իր խոստումը, պատրիարք կարգելով զայն Կոստանդնուպոլսի և շրջակայից հայոց վրա, և այս վեհապետական կարգադրությամբ Կոստանդնուպոլսի հայոց առաջնորդությունը վերածվեցավ Կոստանդնուպոլսի հայ պատրիարքության: Թերևս կարենա ենթադրվիլ նաև, թե Հովակիմ Կոստանդնուպոլսի առաջնորդութենեն կոչված ըլլա Բրուսայի առաջնորդության, և Բրուսայեն փոխադրված Կոստանդնուպոլսի՝ իբրև պատրիարք: Այսպիսի ենթադրություն մը թեև անհավանական չէ, բայց մեզի ավելի բնական կթվի Բրուսայի առաջնորդութենեն Կոստանդնուպոլսի առաջնորդություն և ապա՝ Կոստանդնուպոլսի պատրիարքություն հառաջդիմական ընթացքը»¹⁹¹:

Բարգեն եպիսկոպոս տրամադիր է նույնպես Բրուսայի միևնույն Հովակիմ եպիսկոպոսը նկատելու Քյութհահիո եկեղեցին նորոգող հոգևորականը. «Բրուսայի առաջնորդ կամ եպիսկոպոս Հովակիմ, ըստ ամենայն հավանության, միևնույն անձն է Կուտինայի եկեղեցին նորոգող Հովակիմի հետ. որովհետև Կուտինա այն ատեններ կրնար մեկ թեմն եղած ըլլալ Բրուսայի առաջնորդական վիճակին, և ոչ թե առանձինն վիճակ մը, անկախ Բրուսայեն, ինչպես որ էր վերջին ժամանակներու մեջ»¹⁹²:

Ալպոյաճյան կկարծե իր կարգին, թե Հովակիմ, ինչպես Կոստանդնուպոլսո գրավումեն առաջ, նույնպես նաև անկե վերջ, պատրիարքական տիտղոս սրտանալե հետո, իր հոգևոր իրավասության շրջանակին մեջ ունեւր բոլոր օսմանյան տիրապետության եռլիյնները, Բրուսան, Քյութհահիան, չեղրենն, Ֆիլիպեն, որոնք մինչև այդ թվականները չէին ունեցած իրենց եկեղեցական վարչությունը կամ շատ նշանակելի թվով հայեր շունենա-

լով կամ հունական մոլեռանդության պատճառով թուլատրված լըլլալով:

Ալպոյաճյան իբրև ապացույց մեջ կբերե Ամիրդովլաթի բժշկարանին հիշատակարանը, որ Պոլսո Ազգային մատենադարանը կգտնվի և որ կհիշե, թե Ամիրդովլաթ իր երկն սկսավ «ի Ֆիլիպայ, ի թուականութեանս Հայոց ԶԺԾ (=1466). թարգմանեցաւ պատուական բժշկարանս ի թուականիս Հայոց ԶԺԸ (=1469) ամիս դեկտ. ԻԶ. ի կաթողիկոսութեան Տէր Ըսրստակիսի և յեպիսկոպոսութեան Տէր Յովակիմի...»:

Ասիկա բացորոշապես կհաստատե թե,— կըսե Ալպոյաճյան,— Ֆիլիպե 1466-են առաջ Կ. Պոլսո Պատրիարքության իրավասության ներքե էր, ինչ որ Ֆիլիպեի համար ճշմարտություն մըն էր՝ Ադրիանուպոլսո համար ավելի ևս, վասնզի աշխարհագրապես վերջինը առաջինն ավելի մոտ էր Կ. Պոլսո¹⁹³:

Զույգ հայ եպիսկոպոսներու, Գրիգորի և Մարտիրոսի ներկայությունը Պոլսո մեջ առաջին Հովակիմի հիշատակութենեն երկու տասնյակ տարիներ հետո, մեզ կմղեն հետեցնելու, թե 1438-ին Պոլսո մեջ հիշատակված Հովակիմը նույնը չէր կրնար ըլլալ հետագային հիշված Հովակիմներուն հետ, բայց հավանաբար նույն անձն էին Բրուսայի և Կուտինայի Հովակիմներն ու Պոլսո առաջին պատրիարքը, և անշուշտ այս վերջինն էր նաև այն Հովակիմը, որ 1466—1469-ին Ֆիլիպեի մեջ պիտի հիշատակվեր Ամիրդովլաթի կողմե:

Ավելցնենք, որ Հովակիմ Պատրիարքը իր պաշտոնին վրա էր մինչև 1478: Այդ տարին է, որ Նիկողայոս եպիսկոպոս մը կհիշատակվի իբրև անոր հաջորդ, որովհետև Մատթեոս և Աբրահամ վարդապետները, զորս Ֆաթիհ Պոլսի էր կանչած Սեբաստիայեն՝ Հովակիմի հաջորդ կարգելու համար, մերժած էին ստանձնել պատրիարքական պաշտոնը, լլաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ ի մարդկանէ»¹⁹⁴:

9. ԱՂՈԹԱՏԵՂԻՆԵՐ ՀԱՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հայ և օտար աղբյուրները համաձայն չեն հիշատակելու առթիվ աղոթատեղիները, դորս Պոլսո մեջ ունեին հայերը Ֆաթիհի օրով: Համաձայն չեն նախ թիվին մասին հայոց ունեցած եկեղեցիներուն: Հետո շատերը իրարու հետ կշփոթեն եկեղեցիները, կամ թե տարբեր թաղերու մեջ կգետնվեն զանոնք:

Ահմեդ Ռեֆիք թուրք պատմագետը, Պոլսո առումեն հետո հայոց տրամադրված եկեղե-

¹⁹¹ Բարգեն եպիսկոպոս, հիշված աշխատությունը, էջ 439:

¹⁹² Անդ, էջ 440:

¹⁹³ «Ամենուն տարեցույցը», 1909, էջ 210:

¹⁹⁴ Դոկմ. Վ. Թարգուման, «Հանդիս ամսօրյա», 1896, էջ 247:

ցիններուն մասին խոսելով, կգրեն. «Ստամբուլի մեջ Ս. Նիկողոս եկեղեցին մասնավորաբար հայերուն և լատիններուն տրվեցավ: Եկեղեցիին երկու երրորդը հայերուն, մեկ երրորդն ալ լատիններուն կպատկաներ: Այս եկեղեցիին վերև գտնված Ս. Աստվածածին եկեղեցին ալ միայն լատիններուն թողվեցավ: Սակայն Մուրադ Դ-ի ժամանակ, 1635-ին, հայերուն և լատիններուն եկեղեցիները գրավվեցան Ռեյսե փաշայի կողմեն: Հայերուն ցույց տրվեցավ Պալաթի Այա-Իսթրաթի եկեղեցին: Ս. Նիկողոս եկեղեցին ալ մզկիթի վերածվելով Քեֆեյի-չամի անունը առավ: Քեֆեյն եկող հայերուն բնակած թաղը Քեֆեյի-մահալեի կոչվեցավ: Ս. Աստվածածին եկեղեցին ալ Օղալար մեխըդի եղավ»:

Թուրք ուրիշ հեղինակ մը, ճարտարապետ Ալի Սաիմ Ուլգեն, Ֆաթիհի շրջանի Պոլիսը նկարագրող իր մենագրության մեջ կըսեն, թե պատմական քարտեզին վրա ցույց կտրվի հայ եկեղեցի մը, որ նախկին Մխիթարի Աստվածածնա եկեղեցին է (Eglise de N. D. la Consolatrice), ուրիշ հայ եկեղեցի մը, որ նախկին Ս. Համբարձման եկեղեցին է (Eglise de l'Ascension), և երրորդ մը, որ ցույց տրված է Սուլումանաստրերի եկեղեցի անունով, որ Պերկեպատոսի նախկին վանքն է (Monastère de Sainte Marie de Périvlepte): Սույն երեք եկեղեցիներն ալ նախապես բյուզանդական եկեղեցիներ եղած են, կըսեն Թուրք հեղինակը¹⁹⁵:

Գերման արևելագետ Ֆրանց Բաբինգեր Ֆաթիհի նվիրած իր հատորին մեջ, խոսելով Կաֆային Պոլիս բերված գերիններուն մասին, կգրեն. «Երբ գերիններով և անսահման ավաորով բեռնավորված նավերը Պոլիս հասան 1475 օգոստոսի 3-ին, պետք եղավ, որ հրաժարին զանոնք ցամաք հանելու ահռելի ժանտախտին պատճառով, որ դեռ կտիրեր մայրաքաղաքին մեջ: Խեղճերը, իտալացի և հայ, նախ և առաջ Սկյուտար առաջնորդվեցան. հետո, երբ համաճարակը իր ավերները դադրեցուց, անոնց բնակության տեղ հատկացուցին Ադրիանուպոլսո զոան (Էդիրեն փալատ) և Ոսկեղջյուրի միջև Ս. Կույսի (Օղալար ջամի) և Մանվելի վանքին (Քեֆեյի ջամի) բյուզանդական եկեղեցիները հանձնվեցան նոր ժամանողներուն»¹⁹⁶:

Յորգա կգրեն¹⁹⁷, թե «Ստուգիոնի վանքը թաղը եղավ հայերուն, որոնք երբեմն հա-

րուստ գոհարավաճառներ¹⁹⁸, տարեկան 1 000 դուկատ վարձք կուտային սուլթանին¹⁹⁹. Ս. Գևորգի մեծ եկեղեցին, ամենեն գեղեցիկը Ս. Սոփիային հետո, մնաց անոնց²⁰⁰. Իրենց եպիսկոպոսը թափոններու ատեն Տիեզերական Պատրիարքեն անմիջապես հետո կուգար, և իսլամ իշխանի մը թլփատման հանդեսին ան կրնար ներկայանալ ուխտունվեց քահանաներով և երկու հարյուր քառասուն հետևորդներով»²⁰¹:

Ուրիշներ Սուլումանաստրերի հայոց եկեղեցին միայն կհիշեն: Թուրքիո նվիրած հատորի մը մեջ հեղինակները, խոսելով վեհանձն կեցվածքին մասին, զոր ցույց էր տվեր Ֆաթիհ քրիստոնյաներուն հանդեպ, կըսեն, թե «Ան. պարտալսներուն կրոնական պաշտամունքի ազատություն շնորհեց, և անոնց տվավ բոլոր եկեղեցիները, որոնք կգտնվեին Սուլումանաստրերի հայոց եկեղեցիներն մինչև Էդիրեն քափու»²⁰²:

Նույնքան հակիրճ է նաև Ժոնքիեռ. «Սուլթանական ֆերման մը ցանուցի բղած հույներուն հրամայեց Կ. Պոլիս դառնալ, և դավանանքի ազատ կիրարկություն և ինչքերու պահպանություն խոստացավ անոնց: Հույները պահեցին իրենց եկեղեցիները, որոնք կգտնվեին Սուլումանաստրերի հայոց եկեղեցիներն մինչև Ադրիանուպոլսո դուռը (Էդիրեն քափու)»²⁰³:

Օրմանյան, ընդհակառակը, վեց եկեղեցիներ կենթադրեն. «Ալլը շեմաթ կամ վեց հասարակություն անունը, որով կոչված են Կոստանդնուպոլսո հայերը առաջին հրովարտականներու մեջ, զոնեն վեց սկզբնական եկեղեցիներու գոյությունը կպահանջեն, զի նույնիսկ տաճկական ըմբռնումի մեջ, ամեն հասարակություն կամ ժողովուրդ կամ թաղ յուր աղոթատեղիներով կստանար յուր ուրույն կաղմության հիմը»²⁰⁴:

Ի ձեռին ունեցած մեր տվյալները մեղայն եղրակացություն կբերեն, թե հայերը Ֆաթիհի օրով չորս աղոթատեղիներ միայն ունեցած են Պոլսո մեջ: Ասոնցմե առաջինը Ղալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչն էր: Կառուց-

198 S. Von Gherlach. „Tagebuch“, p. 141, 349.

199 Crusins, „Germano-Graecia“, Bâle, 1585, p. 227—228.

200 Գեոլախ, հիշված աշխատությունը, էջ 184—185, 186, 201—204, 327—339.

201 Crusins, „Turco-Graecia“, Bâle, 1584, p. 235.

202 J. M. Jouannin et Jules Van Gaver, „Turquie“, Paris, 1840, p. 76.

203 Ա. դը ժեֆֆեռ, հիշված աշխատությունը, էջ 173.

204 «Ազգապատմ», Բ, էջ 2186:

195 Միմար Ալի Սաիմ Ուլգեն, հիշված աշխատությունը, էջ 28.

196 Ֆրանց Բաբինգեր, հիշված աշխատությունը, էջ 419.

197 N. Yorga. „Byzance après Byzance“, Bucarest, 1935, p. 48.

ված 1391-ին և վերանորոգված 1436-ին, ան գոյություն ունեցող Պոլսո գրավման ատեն 1453-ին Քյուզանդիոնի հանդիպակաց ափին վրա:

Ղալաթի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր երկրորդ վերաշինության հետո դիմացած է մոտ երեք դար, 1436-ին մինչև 1733, երբ, 1731-ի մեծ հրդեհին հետո, պիտի կառուցվեր Կոլոտ Հովհաննես պատրիարքի ջանքերով:

Հայ կաթոլիկ բանասերները պնդած են ուղեռ կայնդեն, թե ի սկզբան հայ կաթոլիկներուն էր Ղալաթի Ս. Լուսավորիչը: Անոնց գլխավոր փաստն այն է, ինչպես տեսանք, թե ջենովական թաղի մը մեջ, որպիսին էր Ղալաթիան, հայոց եկեղեցին կաթոլիկ միայն կրնար ըլլալ, և Կաֆայի հայերը, որոնք կառուցին այդ եկեղեցին, անտարակուսելիորեն կաթոլիկ էին:

Եթե ջենովացիներու օրով Ղալաթի մեջ բնակող հայերը իսկապես կաթոլիկ եղած ըլլային, ինչպես նաև եթե կաթոլիկ եղած ըլլային Կաֆային 1475-ին բերված հայերը, այս վերջինները պիտի երթային զետեղվիլ իրենց դավանակիցներուն մոտ: Մինչդեռ, ինչպես ցույց կուտա վերջերս հայտնված կալվածահամար մը, Կաֆային եկած ոչ մեկ կալվածատեր չի հիշվիր Ղալաթի մեջ 1478-ին, մինչ Կաֆային եկող 267 կալվածատեր ցույց կուտա վավերաթուղթ բուն Պոլսո կողմը²⁰⁵:

Պոլսո գրավումեն հետո Ղալաթի Ս. Լուսավորիչը միակ եկեղեցին էր, զոր հայերը կառուցած էին իրենք: Ջայն ունեին նախապես և տէր մնացին անոր Ֆաթիհի գլխին հետո: Ֆաթիհ թույլ չտվավ, որ քրիստոնյա որեւէ նոր եկեղեցի կառուցվի իր մայրաքաղաքին մեջ: Մեծ շնորհ էր իր կողմէ, եթե հույներուն թողուց անոնց նախապես ունեցած եկեղեցիներուն մեկ մասը: Իսկ հայերուն կրոնական պահանջներուն գոհացում տալու ուրիշ ելք չգտավ, բայց եթե քանի մը եկեղեցի գրավել հույներեն և զանոնք տրամադրել հայերուն:

Երկրորդ աղոթատեղին, զոր հայերը ունեցան Ֆաթիհի օրով, Սամաթի Ս. Գևորգ եկեղեցին է: Ցարդ մեր ունեցած տվյալներուն համաձայն, ան հունական եկեղեցի մը եղած է ի սկզբան, և հետո հայոց տրված թուրք սուլթաններուն կողմէ:

Անոր առաջին անգամ կալնարկե Երեմիա Չելեպի Քյոմյուրճյան իր «Ստամբուլայ պատմութիւն» երկասիրութեան մեջ, զոր հորինած է 1661—1684 տարիներուն: Իր գոր-

ծին առաջին գլուխին 50—60-րդ տողերը կավանդեն արդարև.

«Երկրորդ իսկէլէ և դուռն՝ որ ի Սամաթիայ է կոչման, Ուր շատ մէյխանէք կային՝ տէրտէրներն աստ մէսթի միւթամ: Վեց և եօթն ազգին յունաց՝ փրկսոփայք աստ են բնական. Վայելուլ վայրք պարտիզօք՝ զի սա ջիւք քաղքիս դիպման: Հազար տունք յաւել աստ հայք՝ ի վերայ որպէս դիտեալ կան, Սուլու մանաստըր կոչեալ՝ Սուրբ Գէորգի փառաւորական, Մովահայեաց պարտիզօք՝ յառաջն էր մեր Փիսկոբարան. Զոր յունաց առեալ տայ մեզ՝ հինքեարն որ Սուլթան Սուլէյման»²⁰⁶:

Երեմիա Չելեպիի ավանդածին համաձայն, սուլթան Սուլէյմանն է (1520—1566) ուրեմն, որ հույներեն առնելով հայերուն տված է Ս. Գևորգ եկեղեցին:

Հետագային հայտնվեցան նոր փաստեր, որոնց համեմատ 1490-ական թվականներուն արդեն հայոց կապտականեր Ս. Գևորգը և Ֆաթիհ սուլթանն էր, որ ընծայած է զայն հայերուն Պոլսո առումեն հետո:

Արդարև, Սարգիս դպիր Հովհաննեսյան «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ» խորագիրը կրող իր ձեռագիր երկին մեջ, խոսելով Սուլուսմանաստըրի Ս. Գևորգ եկեղեցւոյ մասին, կգրե. «Առումն եկեղեցւոյս ի ձեռաց յունաց եղեալ է ի ժամանակի սուլթան Մէհմէմէտին յառման քաղաքին Կ. Պոլսոյ, վասնզի տեսնել և ընթերցեալ է իմ գիրք մի Ողբոց Նդեսիոյ, բոլոր գրով, որ ի յիշատակարանին գրի այսպէս. «Գրեցաւ երգարան Տեառն Ներսէսի ի մայրաքաղաքն Ստրնպուլ, ի Սուլու մանաստէրս՝ ընդ հովանեալ Սրբոյ Գէորգայ զաւրավարին, ձեռամբ անիմաց և մեղսամած գրչի Կարապետ երիցու Համշինցոյ: Աղաչմ զձեզ անմեղադիր լերուք զի կար մեր այսչափ էր: Թվին Զեթ յունիս ամսոյ ի Ին (1493)»²⁰⁷:

Երկրորդ հիշատակարան մը ձեռագիր Ավետարանի մը մեջ, որ կպահվեր Սամաթի եկեղեցին և որ ընդօրինակված 1293 թվականին Լամբրոն քերդի մոտ Արմեն կոչված լեռան մեկ վանքին մեջ, Սամաթի Ս. Գևորգին տրված է 1495-ին, կրսվի. «Նուաստ ծառայս ծառայիցդ Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս

²⁰⁶ Դոկտ. Վ. Քորգոմյան, «Երեմիա Չելեպիի Քէօմիւրճյան, Ստամբուլայ պատմութիւն», Վիեննա, 1913, Ա, էջ 19:

²⁰⁷ Հրատ. Դոկտ. Վ. Հ. Քորգոմյան, «Մանթապարութիւն Ստամբուլայ պատմութեան», Ա, Վիեննա, 1913, էջ 211:

²⁰⁵ Օսման Էրզին, «Ռեսիմիլի թարիհ մեջմուսսը», 1958, թիվ 41, էջ 2352—2364:

կաֆայեցի, բազմամեղ հողս, որ աղաչեմ կոչելի բարձրագույն քահանայական անուամբն և իմ այլ ոչինչ ունելով տալ Տեառն Աստուծոյ իմ, զՍուրբ Աւետարանս, որ լիմ հալալ արդեանց գնեցի և զաւետարանիչքն նկարել տվի և նոր կապել տուի և դրի յիշատակ իմ հոգւոյս և իմ ծնողացն ի Ս. Գէորգ տաճարիս, որ կոչի Սուրբ Մանաստիր: Մի՛ որ իշխեսցէ գրանել. թվ. ԶԽԴ (1495)»²⁰⁸:

Զ. Ղ. Ինճիճյան կգրե իր կարգին. «Երրորդ եկեղեցին է Սուրբ Գէորգ ի Սամաթիա, ի բարձրաւանդակի ի ծովահայեաց վայրի, մեծ բան զայլ եկեղեցիս, ուր էր երբեմն Պատրիարքարանն Հայոց մինչև գրեթէ ի ՌՂ (1641) թուական: Պատմի թէ Յաթիհ սուլթան Մէհմեմէտ բաց յայլոց Հայոց՝ ի Սամաթիա էած բնակեցոյց զժողովուրդ Հայոց ի կողմանց Գարամանու, որք զառաջինն բնակեցան վրանօք յանտառի անդ առաջի եկեղեցւոյն՝ որ այժմ հրապարակ է նորին, մինչև ապա յարկս բնակութեան շինեալ բնակեցան ի շրջակայս եկեղեցւոյն, որ յանուն նոցա մինչև ցայժմ կոչի Գարաման մանալլէսի. որով այժմեան բնակք Հայոց ի Սամաթիա (որոց թիւ ասի լինել ասիի քան զհազար տուն) երկին իջեալ գէթ ըստ մասին ի նոյն Գարամանցոց. և այնպէս լինին սերունդք նախնի կրիկեցւոց: Իսկ այս եկեղեցին որ էր Յունաց՝ խափանեալ կայր ի նոցանէ սակս արեանհեղուցեան ինչ դիպուածոց՝ յոյր սակս ի բարբառ տաճկաց Գանլը քիլիսա. խնդրեալ զայս Հայոց առնուն հրամանաւ առաջին սուլթան Սիւլէյմանայ վասն իւրեանց, և հետզհետէ ընդարձակեն՝ մինչ լինել իբր երբեակ եկեղեցի. Սուրբ Գէորգ, Աստուածածին և Սուրբ Երրորդութիւն»²⁰⁹:

Զ. Ղ. Ինճիճյան զանազան աղբյուրներէ բաղելով կրսե, թե Սալումաճաստըր անունով ծանոթ սուլթան մենաստանը «կանգնեաց Սրբուհին Հեղինէ. ընդ նմին կառոյց նաև զպալատ և զծերանոց յանուն Սամաթիոյ, այլ մենաստանն կոչեցաւ Դաստրիա, վասնզի Հեղինէ յետ գտանելոյ զսուրբ խաչն յերուսաղէմ, և որչափ ինչ ծաղիկս գտեալ էր ի վերայ հողոյ ընդ որով գտաւ սուրբ խաչն, տընկեալ յանօթս որ յունարէն կոչի Դաստրիա, և զնոյն անօթս եղ յայսմ մենաստանի. յայնմանէ և մենաստանն ընկալաւ զիւր անուն»²¹⁰:

Գ. Հնասեր սխալ կգտնե այն ենթադրութիւնը, թե Ս. Գևորգ եկեղեցին հին Ղաստրիա

մենաստանին հողին վրա կառուցված ըլլա, և կայնդե, թե ան հույներուն նախկին Պերեկեպտոս մենաստանին ճիշտ սահմանին մեջ շինված է: «Gastria մենաստանը, — կրսե, — որ Perivleptos մենաստանին շատ փոքր էր, ուրույն շենք մ'է. կգտնվի Ս. Գևորգ եկեղեցիին մոտերը ու Սանճաֆտար մեսիթի աւունը կկրե», — մինչ — Ս. Գևորգ եկեղեցին ընդարձակ և աչքառու շենք մ'էր իր հրկիզումն առաջ (1660), որովհետև նախկին հունական մենաստանին այլևայլ մասերը դեռ անեղծ վիճակի մեջ իր մեջը կպարունակեր»²¹¹:

Պատասխանելով այն ենթադրութեանց, թե Սամաթիո սուլթան Ս. Գևորգ եկեղեցին Յաթիհ-ը տված է հայոց և ժամանակ անցնելով զայն խլած են հույները²¹², հետո Սուլեյման Ա զայն ետ առնելով դարձյալ հայոց տված է ԺԶ դարու կեսերուն, Գ. Հնասեր կգրե. «Ստույգ իրողութիւնը սա է, որ հույները, որոնց սեփականութիւնն էր իրապես այս եկեղեցին — ավելի ճիշտը՝ մենաստանը այս եկեղեցիով — անդադար և առանց երբեք հոգնելու ձեռնարկներ կատարած են տարիներով կառավարութեան մոտ, վերստին գրավելու համար զայն և հաջողած ալ են մեկ-երկու անգամ: Այն ժամանակները ով որ շատ կաշառք կվճարեր՝ վճիռը (իլամ) իրեն ի նպաստ կստանար անպայման: Բայց հայերն ալ ձեռքերնին ծալած չեն նստած: Իրենք ալ չուզելով ձեռք հանել այս եկեղեցին, ամեն զոհողութիւն հանձն առին, ամեն ճիգ թափեցին կրկին տիրանալու համար անոր: ... Այս կարգով փոխհիփոխ հայերը և հույները սեփականութեան իրավունքը իրարմե հափշտակեցին, մինչև որ առաջինները տեղ եղան նորին այս եկեղեցիին, ինչպես որ կպատմվի, սուլթան Իբրահիմի դահակալութեան շրջանին (1640—1648)»²¹³: (Հողավածագիրը այստեղ կհիշե ավանդութիւն մը, որուն համեմատ սուլթան Իբրահիմի կիններն մեկը, հայազգի Շիվեքյար սուլթանուհին, սուլթանին մեկ զվարթ պահուն, իբր շնորհ ստացած է վերջնականապես Ս. Գևորգ եկեղեցին և հայերուն հանձնել տված):

Ըստ Ալպոյաճյանի, «1479-ին Սամաթիո մեջ կհաստատվեր հայ բնակչութիւն մը, այս անգամ Անադոլուն, մասնավորապես Գարամանեն տեղափոխված Յաթիհ սուլթան Մեհմեդ Բ-ի ձեռամբ: Այս գաղթականները Սամաթիո արդի Ս. Գևորգ եկեղեցւոյն տեղը գոյութիւն ունեցող հունական մենաստաններն էին»²¹⁴:

²⁰⁸ Հրատ. Կ. Զ. Բասմաչյան, «Մաղիկ», Կ. Պոլիս, 1891, թիվ 25, էջ 4—5:

²⁰⁹ Զ. Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրութիւն շրից մասնց աշխարհի, Բ մաս, Ներդպ», հատոր Ծ, էջ 131:

²¹⁰ Ա. Ղ., էջ 132:

²¹¹ Գ. Հնասեր, «Կոչնակ», 1932, էջ 544:

²¹² Դոկա. Վ. Բագդույան, «Հանդես ամսօրյա», 1910, էջ 340:

²¹³ Գ. Հնասեր, «Կոչնակ», 1932, էջ 544—545:

տանի մը առջև գտնված անտառին մեջ, նախ վրանի տակ կրնակեին և քիչ-քիչ եկեղեցի-վույն շուրջը տուններ կշինեին: 1486 և 1487 թվականներուն արևելյան գավառներին խել-ճուղրակ հայ գաղթականներու քարավաններ Կ. Պոլիս հասնելով կստվարացնեն հայոց թիվը Կ. Պոլսո մեջ: Հավանական է ենթադրել, թե քիչ հետո աղոթատուն մը ունենալու համար իրենց շնորհված ըլլա հունական մենաստանը, որուն հայոց սեփականութուն դառնալու թվականը թեև որոշ չէ, սակայն բացորոշ է, որ ան արդեն 1493—1495-ին ատենները հայոց կաթողիկոսներ,— ինչպես կհետևի նույն թվականներուն «ի Սուլու մանաստի», «ընդ հովանեալ Սրբոյն Գէորգայ զօրավարին» կամ «ի Ս. Գէորգ Տաճարին» գրված ձեռագիրներու հիշատակարաններեն²¹⁴:

Ավելցնենք, որ Սամաթիո սուլն Ս. Գևորգ եկեղեցին է, որ հայոց առաջին Պատրիարքարանը պիտի ըլլար և այդպես պիտի մնար մոտ երկու դար:

Ս. Նիկողայոսը երրորդն է հայ եկեղեցիներին, զորս ունեցան հայերը Պոլսո գրավումեն ետք:

Եփոթութիւնց առիթ տված է հաճախ Ս. Նիկողայոս անունով զանազան եկեղեցիներու գոյութիւնը Պոլսո մեջ:

Այն Ս. Նիկողայոսը, ուր պաշտամունք կը նեխեն հայերը Ֆաթիհի օրով և որ մզկիթի պիտի վերածվեր 1629-ին ստանալով Քեֆելի ջամի անունը, կգտնվեր էդիրնեքափուփ կողմը ու կաթողիկոս հայերուն և լատիններուն հավասարապես: Ան փոքր եկեղեցի մըն էր և կգտնվեր լատիններու Ս. Աստվածածին եկեղեցիվուն խիստ մոտը, ինչպես կվկայի Պիետրո դելլա Վալլե որ Պոլսին անցած է 1614-ին²¹⁵: Հատիններու մասին մեջ դոմինիկյան հայերն է, որ պաշտամունք կկատարեին²¹⁶:

Ան կհիշվի նաև Պալաթի և Գարակոմբուլուկի կամ Կոմբուլուկի թաղերուն անուններով, որովհետև այդ թաղերը կից էին էդիրնեքափուփին և կշփոթվեին հաճախ:

Հազվադեպ երևույթ չէր, որ միևնույն եկեղեցիին օգտվեին տարբեր դավանանքներ: Մանոթ է, որ ԺԶ—ԺԷ դարերուն Հալիպի հայոց եկեղեցիներին կօգտվեին նաև «Քոանկը», ինչպես կհիշատակե Սիմեոն Լեհացի²¹⁷, այ-

սինքն լատինածին կաթողիկոսը՝ Խալա-ցիք, գաղղիացիք և այլն²¹⁸, որոնք վաճառականութիւն կգտնվեին Հալիպ և չունեին տակավին իրենց սեփական եկեղեցիներ²¹⁹:

Բուրբնշի հին հայ եկեղեցիւ պարագան ևս ունինք: Նախքան Ս. Հրեշտակապետ եկեղեցիւ կառուցվիլը, հայերն ու կաթողիկոսները միևնույն եկեղեցիւ մեջ էր, որ պաշտամունք կկատարեին: Այդ եկեղեցին, որ Բըրբնցիա (Նդրալոթիւն) կկոչվեր, մինչև այսօր ալ կա: Երբ առանձին եկեղեցի ունեցան հայերը, Բըրբնցիան մնաց լատիններուն:

Ամենահին վավերաթուղթը, զոր լատիններն ունին, Բերայի իրենց համայնական վարչութիւն 1583 նոյեմբեր 18 թվականով Պոլսո լատին ներկայացուցչին ուղղած մեկ գիրն է, որով կխնդրվի ապահովել այն իրավունքները, զորս լատին հոգևորականները ունին, Մեհմեդ Բ-ի կողմի իսկ 1453-ին տրված հրովարտակի մը համաձայն Պոլսո Ս. Նիկողոս և Ս. Աստվածածին, և Բերայի Ս. Աննա, Ս. Բենուա, Ս. Հովհաննես, Ս. Սեբաստիան, Ս. Անտոն և Ս. Գևորգ եկեղեցիներուն վրա²²⁰:

Հայտնի բյուզանդագետ դոկտ. Պասպատի, խոսելով Ս. Նիկողայոսի մասին, կըսե, թե հավանաբար ան հայկական եկեղեցի եղավ 1475-ի վերջերը, երբ օսմանցիք վերադարձան Կաֆայի արշավանքին²²¹:

Հայ կաթողիկոս բանասերները այն կարծիքին են, որ Ս. Նիկողայոս եկեղեցին կապ չունի բնավ հայոց հետ. ան, ըստ իրենց, լատինական եկեղեցի մը եղած է պարզապես, ուր հաճախելու և պաշտամունքը ընելու արտոնվեցան Կաֆային եկող հայերը, որովհետև անոնք ևս կաթողիկէ էին²²²:

Հ. Գրիգորիս Գալեմբջարյան ծայրահեղութիւն կտանի դավանական իր նախանձախնդրութիւնը: Ս. Նիկողայոսը երկու դավանանքներուն պատկանած է հավասարապես:

Սիմեոն Լեհացի, որ Պոլսն անցած է 1608-ին, կգրե իր ուղեգրական նոթերուն մեջ. «Եւ կայ ի Պալատ եկեղեցի մի, կէսն ֆռանկի, կէսն հայի. նոքա ժամ ու պատա-

²¹⁸ Հ. Ներսես Ակիմյան, «Հանդես ամսօրյա», 1936, էջ 310:

²¹⁹ F. Tournèbize, «Le catholicisme à Alep au XII-e siècle», «Etudes», t. 134, (1913), p. 351—370:

²²⁰ Belin, «Histoire de latinité à Constantinople», 1894, p. 110:

²²¹ «Բանասեր», Փարիզ, 1899, էջ 49:

²²² Հ. Գ. Գալեմբջարյան, «Հանդես ամսօրյա», 1911, էջ 478:

²¹⁴ Ա. Ալպոյանյան, «Երեքդարյան պատմութիւն Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցիւ», էջ 169—170:

²¹⁵ Viaggi di Pietro della valle, Turin, 1843, I, 26:

²¹⁶ Carbognano, «Discrizione topografica di Constantinopoli», 1794:

²¹⁷ Սիմեոն Լեհացի «Ուղեգրութիւն», հրատ. Հ. Ն. Ակիմյան, Վիեննա, 1936, էջ 319:

րագ կ'առնեն. և Հայք կ'առնեն ի միասին սիրով և խաղաղութեամբ²²³:

Ուրիշ աղբյուրի մը համաձայն, զոր Հ. Գ. Գալեմբյարյան ինքն իսկ մեջ կ'ըսեր, «Քեֆե-լի ճամփին եկեղեցի էր Սրբույն Նիկողայոսի, կեսը հայոց՝ կեսը լատինաց. Քեֆեյի հեմ Ղըրըմեն եկող Տոմինիկյան կրոնաւորներուն ձեռքն էր այս եկեղեցին. Քեֆեյեն կուգային կերթային, անոր համար Քեֆեյի մահալլեի, կամ հայերեն Քաղըրցոց մահալլեի կրսն մինչև հիմա, Սարմա Թոմրուխին սեմթն էր նե. կամ թե աս եկեղեցիին կեսը մեր շեղած Ֆրենկի մահալլե էր, ետքը Գրիգոր Պարոն-տերը, որ Երուսաղեմս պատրիարք էր, Ֆրենկին մահալլե տալով՝ ժամուն կեսը վարձքով կ'ընակեինք, ետքը 1600-ին տաճիկը ուղեց ճամի ընել, ետքը Ֆրանքսըզին էլ-լին թող շտվալ. քիչ մը ատեն անցալ Մյուֆ-դուն դուռը մյուհրեց. 4 ամիս ետքը փարա-յով իղին առին. կենե ետքեն տյորտունճու սուլթան Մուրատին ատենը ճամի շինեցին»²²⁴:

Եթե Ս. Նիկողայոսը կաթողիկոսներուն ըլլար, Դարանաղցին ի՞նչ գործ ունէր հոն: Դարանաղցին, պատմելով Երուսաղեմեն իր Պոլիս դարձը, 1627-ին, կրսե արդարեւ, թե իշե-վանեցալ Ս. Նիկողայոս եկեղեցին, այնպիսի պահու մը, երբ «մահալլէի տաճիկքն շարացեալք վաղուց հետէ, կու մնային վասն ի կողմն Կէօմրիկի եղեալ Ս. Նիկողայոս եկեղեցուն», որուն կեսը ֆռանկաց, և մյուս կեսը ի հնազ մեր հայերուս կապտկաներ: Դարանաղցի կրսե, թե հաջողեցալ ընդարձակել հայոց մասը. «շատ ընդարձակեցաք և մեծուցաք, որ յառաջ մէկ մարդոյ նստելոյ տեղ ոչ կայր մեր հայոցս, բայց սակաւ ծառատունկ, և գերեզմանատուն, և բուրաստան, իսկ ֆռանկաց տունք և տեղիք և բուրաստանք շատ կային, որ մեր ազգն վարձուորք էին: Նա հանց յաջողութիւն եղև յԱստուծոյ, որ մերն՝ քան զնոցայն շատ եղև: Քանզի շորպաճի մի կայր անդ, որոյ տներն հուպ էր եկեղեցուն: Սա բնաշինչ եղև ամենայն տամբն, որոյ տներն մեք գնեցաք և այլ շատ գեղեցիկ շէնք շինեցաք, և անուշահամ շուր մի հանեց մեր աշակերտ Յակոբ արեղան, և այլ բազում սպասիւք գեղեցիկն զարդարեցաք»:

Դարանաղցին հետո կ'մեկնի Երուսաղեմ, և իր բացակայութեան է, որ տեղի կ'ունենա Ս. Նիկողայոսի գրավումը թուրքերուն կողմէն, վերածվելու համար մղկիթի, դեպք, զոր ի լրո է որ կարձանագրե Դարանաղցին: Ան կ'պատմե, թե իր մեկնելեն հետո թուրքերը

եկած ու կնքած են եկեղեցին, դրամ պահանջելով: Հայերը տված են մաս մը դրամ ու զացած դիմած են պատրիարքին, որ Գրիգոր կեսարացին էր, Դարանաղցիի հակառակորդը, և որ իբրև թե վնասած ըլլա դիմող հայերը, ըսելով անոնց, թե «Ֆռանկներն և սեփական տեղացիքն կու հոգան»: Հայերը, ճարահատ, կերթան մյուֆթիին ետ կ'պահանջեն իրենց տված դրամը, ինչ որ ճակատագրական կըլլա եկեղեցվո համար, որովհետև «ոնց կու տեսանէ միւֆթին որ յետ կ'առնուն զդրամն, յայնժամ կու հաւաքէ զամենայն ուլամայան իւր, և շատ ամբոխք կու գնան յեկեղեցին, և մուլրիկքն կու ձայնեն և նամազ կու կարդան, և յետ այնորիկ մեշիտ կ'առնեն»:

Ս. Նիկողայոսի գրավման շարժառիթը ավելի մանրամասն պատմված է ժամանակակից ուրիշ աղբյուրի մը մեջ: Արդարեւ, Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցին պահված ձեռագրերուն մեջ (թիվ 69) գրչագիր տեսնու մը կա, զոր 1811-ին Մեքոն քահանան ընդօրինակած է էջմիածնա գրադարանի «Լուծմունք Յորայ և Մեկնութիւն Յայտնութեան» խորագրով ձեռագրե մը, և որ «Պատմութիւն յաղագս անուոյն տաճկաց զՍուրբ Նիկողայոս եկեղեցին ի ձեռացս հայոց, և տալոյն զկնի միոյ տարւոյ զՍուրբ Հրեշտակապետ եկեղեցին փոխանակ նորին» վերնագիրը կ'ըսէ: Զեռագիրը սապես կ'սկսի. «Եւ ժամանակս իշխանութեան տաճկաց շորորդ սուլթան Մուրատին, որ էր Փրկչական թիւն 1627, և մերս Ռէշ, և հիճրէթի 1036, էր եկեղեցի մի հայոց յԱստամպօլ մեր ի յետրէնէ դուռն ի թաղին Կաֆայու (ըստ տաճկաց Քէֆէլու) և անուն նորա Սուրբ Նիկողայոս»²²⁵:

Հետո կ'պատմե դեպքը իր բոլոր մանրամասնութեանց մեջ, զայն վերագրելով նախանձի և ընչաքաղցութեան. «Եւ եղև շարանալ և ի նախանձ շարժել ումանց տեսանելով զերթալն քրիստոնէից ի ժամ աղօթից մեծաւ խմբիւ, զարս և զկանայս, զծերս և զտղայս: Եւ ոմն ի մեծաց, մութպախ էմինի Օսման աղա անուն, կամեցեալ վրէժխնդիր լինել՝ ասէ. ի մեր մէջն այսչափ համարձակութիւն շատ է քրիստոնէական միլլէթին, և համախոհ գտեալ զոմն, որոյ անունն Հավրուզճի Չավուշ, և դեռ զայս ժողովեալ ի մի վայր, խորհուրդ արարին, թէ որով հնարիւ խափանումն արացեան եկեղեցուն, զի ի պատճառս այս ցրուեսցին քրիստոնէայքն»:

Առիթը կ'ներկայանա ինքնին: Հայ երեւելիներն մեկը քսակ մը դրամ փոխ խնդրած ըլլալով, փոխարեն եկեղեցվո կալվածաթղթերը

²²³ Սիմէոն Լեմազյալ «Մուկգրութիւն», էջ 25:

²²⁴ «Հանդես ամսօրյա», 1911, էջ 480—481:

²²⁵ Ա. Ալպոյանյան, հիշված աշխատութիւնը, էջ 44:

կապահանջին իբրև գրավական: Դրամին հատուցման ատեն, փոխանակ կալվածաթղթերուն, ուրիշ թուղթեր կուտան և ատեն մը հետո դատ կրանան հայոց դէմ, թե առանց իրավունքի գրաված կապահանջ եկեղեցին. «Բերէք զգիրսդ, զոր տեսանեմք, թէ որով թէ՛ մէսիւկով զապթ կու անէք զայս եկեղեցին: Եւ նոքա որոնեալ ոչ գտին: Քանզի ի ձեռս նոցա էր մնացեալ թղթերն, և մերայինքն ոչ գտէին: Եւ ապա դատաստան արարեալ առաջի խաղաքեարներուն, ասացին, թէ որովհետեւ ֆուզուլի զապթ են արեր, պարտ է զայդ եկեղեցին ի մէջիտ առնել, և աղօթանոց տաճկաց: Յորժամ առին զայսպիսի հրաման ի դատաւորացն, զնացեալ խմբովին յեկեղեցին, և ձայնեալ ետուն զսալայն, և կատարեցին զիրեանց աղօթսն. և խաւար ածին վերայն տառապեալ աղգիս Հայոց: Իսկ ժողովուրդը յայսմ ժամատանս, ցիր ու ցան եղեալ սփռեցան յայլ և այլ թաղս, անբնակ և անտեղ եղեալք, կատարէին զեօթն խորհուրդ Ս. Եկեղեցւոյ:»

Նշանակալից է, որ Մելքոն քահանան, որ 1811-ին էջմիածնի մեջ «Յորայ լուծմունք»-ի մը մեջեն ականատեսի մը վկայութիւնները կընդօրինակե 1629-ի դեպքերուն մասին՝ իր ընդօրինակութիւնը կմակագրե «Պատմութիւն յաղագս առնուլն տաճկաց զՍ. Նիկողայոս եկեղեցին ի ձեռաց հայոց», և այլն²²⁶:

Ավելցնենք որ ականատեսի նույն վկայութիւնները պահպանված են ձեռագրերու տրցակի մը մեջ ևս, որ կապահանջի վիճանայի Մխիթարյանց մոտ և ուր կերեալ ճիշտ միևնույն վերատառութեամբ²²⁷:

Օրմանյան, ակնարկելով Պալաթու եկեղեցւոյ շուրջ հարուցված դեպքերուն Գրիգոր Կանարացի պատրիարքին օրով, շատ հակիրճ կանցնի. «Այդ թաղին պատկանող Կյոմրուկի Ս. Նիկողայոս եկեղեցին, որ առաջ լատին եկեղեցի եղած կըսվի, և հետո Կաֆայի հայերուն անցած, և վերջերը թաղին աղգային եկեղեցին էր եղած, կառավարութեան կողմէ մղկիթի վերածված էր, և այսօր ալ Քեֆիի ճամի անունով կ'ըսվի»²²⁸:

Ս. Նիկողայոսի գրավումը թուրքերուն կողմէ 1692-ին, լատիններուն համար լատինի հարված մը եղավ: Անոնք կըրկվին այս կերպով Պոլսո կողմը ունեցած իրենց զուգ եկեղեցիներուն մեկէն: Հինգ տարի հետո, պիտի կորսնցնեն իրենց մյուս եկեղեցին ալ, երբ Ռեզեբ փաշա պիտի գրավէր զայն, և Բելին իրավունք պիտի ունենար ըսելու. «Սուլթան Մուրադ Դ-ի թագաւորութիւնը վերջ դրավ

լատինութեան վերջին հետքերուն Կ. Պոլսո մեջ. երկու եկեղեցիներն, զորս ան կապահանջաւքին մեջ իսկ, Ս. Նիկողայոսը կորսվեցավ 1629-ին կամ 1630-ին, այսինքն 176 կամ 177 տարի հետո օսմանյան հաղթանակէն, Ս. Աստվածածինը նույն ճակատագիրն ունեցավ 6 տարի հետո»²²⁹:

Հայերը Ս. Նիկողայոս եկեղեցի մը ևս ունին Վանկա թաղին մեջ:

Հ. Ղ. Ինճիճյան²³⁰ կհիշե, թե «էին ի քաղաքին ի Վանգա թաղին և այլ երկուք եկեղեցիք Հայոց: Սուր Սարգիս մերձ ի Զինիլի-համամն, որ այժմ է տուն բնակութեան, և Սուրք Նիկողոս ի Հիսար-տիպի մերձ ի դուռն Ենի-գափուին, որ այժմ է պարտէզ»: Երկու եկեղեցիներն ալ այրած են 1652-ին, և Քյոփրյուլու-օղլու վեզիրը «հրաման ետ Ապրո Սահակայ ումեմն զնեց ի տաճկաց» այրած Ս. Նիկողոս եկեղեցւոյ հողը, «յորժամ ինքն Ապրո գնար ընդ բանակին. իսկ Սահակայ ծախեալ 10 հաղար դուռ շինեաց զամենայն» 1661 թվականին: Հաջորդ տարին սակայն վեզիրը կործանել կուտայ այս եկեղեցին ևս, Ս. Սարգիսի և ուրիշ յոթը հունական եկեղեցիներու հետ մեկտեղ:

Վանգայի Ս. Նիկողայոս Սքանչեւագործ եկեղեցին իջեանած է 1657 ապրիլ 22-ին, — ուրեմն թուրքերուն կողմէ կործանվին քիչ առաջ, — Կիլիկիո Թորոս կաթողիկոսը և հոն ալ վախճանած շաբաթ մը հետո: Թաղման թափորը ճամբա ելած Ս. Նիկողայոսն, հառաջացած է դեպի Սամաթիո Ս. Գեվորգ եկեղեցին, և այնտեղէն ալ ուղղված Պալլադի գերեզմանատունը²³¹:

Ս. Նիկողայոս եկեղեցին եղած է Պոլսո հայոց մտավորական կեդրոններէն մեկը: Անոր հովանիին տակ է, որ իր բժշկական երկերը հորինած է դարուն հայ գիտնականը՝ Ամիր-դովլաթ Ամասիացին, 1471-ին իր «Բառարան բժշկական անուանց»-ը գրելով «առոտն Սրբոյն Նիկողայոս Սքանչեւագործ և արագահաս հայրապետին», իսկ 1474-ին դարձաւ «ընդ հովանեալ Սրբոյն Նիկողայոսի Սքանչեւագործի», շարագրելով «Գիրք սամկական»-ը:

Ս. Նիկողայոսի հովանիին ներքե է դարձաւ, որ Աբգար դպիր առաջին տպարանը հաստատած է Պոլսո մեջ, լույս ընծայելով 1567-ին «Փոքր բերականութիւն կամ Այբե-նարան», 1568-ին «Պարզատումար» մը, «Ժամագիրք» մը և «Պատարագամատոց» մը, իսկ 1569-ին «Մաշտոց» մը:

Պոլսո երկու Ս. Նիկողայոսներէն ո՞րն էր սակայն, որ իր հովանիին տակ առավ առա-

²²⁶ Ա. Ալպոյանցյան, հիշված աշխատութիւնը, էջ 44:

²²⁷ Հ. Հ. Տաշյան, «Մայր ցուցակ...», էջ 912:

²²⁸ «Աղագապատմ», Բ, էջ 2379:

²²⁹ Բելին, հիշված աշխատութիւնը, էջ 117:

²³⁰ Հ. Ղ. Ինճիճյան, հիշված աշխատութիւնը, էջ 133:

²³¹ «Աստղիկ արեւելյան», 1855, թիվ 5:

չին հայ տպարանը Պոլսո մեջ և որուն «առոստ» Ամիրդովլաթ գրեց իր զույգ ձեռագիրները: Հետագային Քեֆելի ջամիի վերածված էդիրնեքափուի Ս. Նիկողայոսն էր, թե Վլանգայի իր անվանակիցը: Մեր բանասերներեն ումնը, ինչպես Հրանտ Ասատուր²³², Թեոդիկ²³³, Արշակ Ալպոյաճյան²³⁴ այն կարծիքը կհայտնեն, թե Քեֆելի ջամիի վերածված էդիրնեքափուի Ս. Նիկողայոսն է:

Տարբեր է սակայն դոկտ. Վահրամ Թորգոմյանի տեսակետը: Ան կկարծե, թե Պոլսո հայ մտավոր շարժման առաջին հովանավորը Վլանգայի կամ որ նույնն է Քումբափուի Ս. Նիկողայոսն է: Չայն այս կարծիքին մղող պարագան այն է, որ Չամչյան Աբգար դպրի բացած տպարանը հիշելու ատեն կավելցնե, թե «գիր սոցա (այսինքն տպարանի հիմնադրին և իր աշակերտներուն) անպիտան էր՝ խափանեցաւ, և ապա հրկիզութիւն պատահալ կորեաւ»²³⁵: Դոկտ. Թորգոմյան կըսե, թե էդիրնեքափուի Ս. Նիկողայոսը հրդեհ տեսած չէ, մինչ Վլանգայինը եղած է հրոճարակ: Թորգոմյան կըսե նաև, թե առաջինը «կիսով ալ ֆուռնկաց պատկանելուն, չէր կըրնար հայկական տպարանի մը հարմար վայր նկատվի»: Եվ վերջապես, ըստ Թորգոմյանի, Դարանաղեցին պետք էր տպարանի պարագան ալ հիշեր, երբ Ժն դարու սկիզբը էդիրնեքափուի Ս. Նիկողայոսին մասին կգրեր²³⁶:

Նույն կարծիքին է նաև Հ. Գրիգորիս Գալեմբյարյանը. «Վլանգայի Ս. Նիկողայոս Սքանչելագործ եկեղեցվո շինութեան կամ սկզբնավորութեան մասին բնավ տեղեկութիւն չունինք. սակայն կարելի է թերևս ենթադրել, որ այն պատրիարքական եկեղեցի շինված ըլլա Վլանգայի հնագույն Ս. Սարգիս եկեղեցվո քովերը, Հովակիմ առաջին պատրիարքին օրերը: Այս ենթադրութիւնն անով աւելի կզորանա, որ այս ժամանակներեն մեզի հասած մեկ քանի ձեռնարկութիւններ այս Ս. Նիկողայոսի հովանիին տակ կատարված են»:

Հ. Գ. Գալեմբյարյան ինքն ալ կհիշե, թե սույն եկեղեցվո հովանիին տակ է, որ Ամիրդովլաթ հորինած է իր մեկ քանի բժշկական երկերը, և Աբգար դպիր տպած 1567-ին փոքր բերականութիւնը²³⁷:

²³² «Ընդարձակ օրացույց Ազգային հիմնադնոցի», 1901, էջ 80:

²³³ «Տիպ ու տառ», 1912, էջ 53:

²³⁴ «Երեքդարյան հորեւան Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցվո», էջ 168—169:

²³⁵ Չամչյան, Գ, էջ 657:

²³⁶ Դոկտ. Վ. Թորգոմյան, հիշված աշխատութիւնը, էջ 345—346:

²³⁷ «Հանդես ամսօրյա», 1911, էջ 478:

Այս կարծիքը կորդեգրե նաև Օրմանյան²³⁸, Չորրորդ հայ եկեղեցին, որ Յաթիհի օրով կհիշվի Պոլսո մեջ, Ս. Աստվածածինն է: Անոր հիշատակութեան կհանդիպինք առաջին անգամ հիշատակարանին մեջ այն համբավովոր Սաղմոսարանին, զոր Ամիրդովլաթ բժիշկը ընդօրինակել տվալ Մարտիրոս վարդապետին «ի թվ. ԶԻԹ (1480) ի յամսեանն յուլիս Ը (8) մեծահամբաւ կայսերանիստ քաղաքս Ըստամպուլ, ի դուն շարախափան Սուրբ Աստուածածինս»²³⁹:

Երկրորդ անգամ ան կհիշատակվի Պալաթու եկեղեցին պահված և 1297-ին գրված Սկևռայի Ավետարանին երկրորդ հիշատակարանին մեջ 1498-ին, իբրև «Ս. Չարխափան Աստուածածին նոր Նիկիտացոց, ի հայրապետութեան Տէր կարապետի քաղաքին Կոստանդինոսիս»²⁴⁰:

Թուրք պատմական հիշատակարաններու հանձնաժողովը, հիմնվելով Հաֆըզ Հյուսեինի վկայութեանց վրա, իբրև կաթոլիկ նախկին եկեղեցի մը կհիշատակե Օղալար մեսքիդը, զոր Քեմանքեշ Մուստաֆա փաշա մզկիթի վերածած էր 1640-ին և որ կգտնվեր Սալաթթոմուլի շրջանակին մեջ, Հալիճի Հասան փաշայի մզկիթին մոտ²⁴¹: Ժամանակակից վկայութիւններեն գիտենք, որ այդ տարիններուն երկու լատին եկեղեցիներ վերածված էին մզկիթի, մեկը Ս. Նիկողոսը, որ դարձած էր Քեֆելի մեսքիտ և մյուսը Ս. Աստվածածինը, որ կոչվեցաւ Գյուլ ջամի:

Ալպոյաճյան կտարվի ենթադրելու, թե Օղալար մեսքիտը հայոց Չարխափան Ս. Աստվածածինը պետք է ըլլա, և Հաֆըզ Հյուսեին շփոթած է հավանաբար անոր մզկիթի վերածածն թվականը: Ալպոյաճյան սույն ենթադրութեան կմղվի մեկնելով այն հավանականութենէն, որ «1475-ին Քեֆենի փոխադրված հայերը այդ կողմերը հաստատված էին Օղալարներու մեջ, և հոն հիմնարկած էին եկեղեցի մը, որ կկոչվեր Չարխափան Ս. Աստվածածին, հավանորեն հանուն Սուրխաթի (Ղրիմ) նույնանուն եկեղեցվուն»²⁴²:

Հայոց Չարխափան Ս. Աստվածածինը պետք չէ շփոթել Դոմինիկյանց սեփական Ս. Աստվածածին եկեղեցիին հետ, որ 1634-ին

²³⁸ «Ազգապատում», Բ, էջ 2267:

²³⁹ «Հանդես ամսօրյա», 1895, էջ 246:

²⁴⁰ Ա. Ալպոյաճյան, հիշված աշխատութիւնը, էջ 170:

²⁴¹ E. Manass, "Une Intéressante constatation de la comission des monuments historiques; deux anciennes églises catholiques de Stamboul", "Servet-i-funoun", 1918, № 1398.

²⁴² Ա. Ալպոյաճյան, հիշված աշխատութիւնը, էջ 167:

գրավվեցավ Ռեչքե փաշայի կողմն և մզկիթի վերածվեցավ, մինչ «մեր Զարխափան Ս. Աստվածածինը պետք է շատ ավելի կանուկ գրավված կամ որևէ կերպով դադրած ըլլա գոյութենէ: Եթե ասիկա իր գոյութիւնը պահած ըլլար ԺՁ դարուն ապահովաբար այն զեղեցիկ մտավորական ձեռնարկները, որոնք կատեղծագործվեին Կ. Պոլսո մեջ Կյոմրուլի Ս. Նիկողոս եկեղեցւոյն շուրջը պիտի ծնունդ առնէին Զարխափան Ս. Աստվածածին եկեղեցւոյն մեջ: Ընդհակառակը զայն հիշված իսկ չենք տեսնար: Հետևաբար իրավունք ունինք զայն ավելի հնագույն շրջանի մը, նույնիսկ լատիններու սաղարանով քանդված համարելու, վասնզի իրենց ազդեցութենէն կիրկվեին և անկախ գոյութիւն մը կունենային, բացարձակ իրենց սեփական եկեղեցիի մը մեջ: Ահա թե ինչու՝ կմտածեմ, թե Զարխափան Ս. Աստվածածին եկեղեցին, հիշված 1480—1498 թվականներուն, պետք է եկեղեցին նկատել է դիրքեքափուի կողմերը հավաքված քեֆեցի հայերու և զայն ուրիշ տեղ չփնտել: Մինչև ԺՁ դարուն երկրորդ կեսը և ԺԵ դարուն սկիզբը Կոստանդնուպոլսո մեջ Սամաթիայի և էդիրնեքափուի շրջաններն դուրս հայ բնակչութիւն գրեթե չկար կամ շատ ցանցաւ էր»²⁴³:

Սույն Ս. Աստվածածինը պետք չէ շփոթել նաև Քումքափուի Ս. Աստվածածինն հետ, որ «1610-ին կամ քիչ մը առաջ հազիվ գոյութիւն կառնէ Հովհաննես Խոյ պատրիարքի ատեն և որուն երբեք չէ տրված Զարխափան անունը»²⁴⁴:

1480-ի և 1498-ի հիշատակարաններուն մեջ հիշված Ս. Աստվածածինն մասին տարբեր ենթադրութիւններ մը կհանգի սակայն բժիշկ Վ. Թորգոմյան: Կփորձեց զայն նույնացնել Քումքափուի Ս. Աստվածածինն հետ, որ 1641-ին Սամաթիային պիտի փոխադրվիր հայոց Պատրիարքարանը: Այս փաստն իսկ ապացուց մը կնկատե, որ Պատրիարքարանը Սամաթիո Ս. Գևորգն հոն փոխադրվելու առաջ պետք էր կայան մը ունեցած ըլլար ան: Զինք այդ ենթադրութիւնն մղող պատճառներն մեկն ալ այն է, որ Երեմիա Զեյքերի իր տարեգրական պատմութիւնն մեջ կըսէ, թե Ս. Աստվածածին եկեղեցին հայերու ամենեւն մեծ ուխտատեղին էր²⁴⁵. «այս միայն բավական է՝ որ անոր հոգեւորական ավելի վաղ ժամանակներու մեջ դնելու»²⁴⁶:

Ս. Սարգիսն, Ս. Գրիգոր Լուսավորիչն, Ս. Նիկողայոսն, Ս. Աստվածածինն և Ս.

Գևորգն հետո, որոնք առաջին հայ եկեղեցիներն եղան Պոլսո մեջ, հայերը հետզհետե եկեղեցիներ ունեցան ուրիշ թաղերու մեջ ալ, բայց շատ ավելի ուշ:

Ինչպես Ղալաթիո հայ եկեղեցին, Պոլսո գրավումն հետո հայոց ունեցած առաջին եկեղեցիները ևս արժարժած են ու կշարունակեն արժարժել բավական անախորժ վեճ մը: Որո՞ւնն են եղած անոնք:

Առաջին վեճը, անշուշտ, Ս. Գևորգ եկեղեցւոյ շուրջն է եղած: Նախապես հունական էր ան, և հետո անցած էր հայերուն: Քանի մը դար վիճած են երկու համայնքները անոր սեփականատիրութեան մասին, մինչև որ հրդեհը վճռած է հարցը:

Կաթոլիկներուն հետ վեճը տեւած է ավելի երկար: Անոնց հավակնութիւնը Ղալաթիո եկեղեցիին սկսած, շարունակված է Ս. Նիկողայոսի շուրջ: Ս. Նիկողայոսի վեճը հարթեցին թուրքերը իրենք, մզկիթի վերածելով զայն 1629-ին: Ժամանակը լուծեց Ղալաթիո Ս. Լուսավորչի հարցն ալ. դարերով հայոց ձեռքը մնաց ան, և կաթոլիկներու հավակնութիւնները ցնդեցան օդը:

Վեճերը թուղթի վրա է որ կմղվին հիմա: Բանասերներն է որ կշարունակեն արժարժել զանոնք, ու դավանական կիրքն է, որ կհարկ փաստերը:

10. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԸ

Ֆաթիհ հունաց պատրիարքին համար Ս. Առաքելոց եկեղեցին Աթոռ նշանակեր էր, որովհետեւ Այա-Սոֆիան մզկիթի վերածելը Պոլիս մտած-շմտած:

Հայոց առաջին պատրիարքին՝ Հովակիմին համար Աթոռ սահմանեց Սուլումանաստրի Ս. Գևորգ եկեղեցին:

Եթե Ֆաթիհ Սուլումանաստրի մեջ զետեղեց հայոց Պատրիարքութեան Աթոռը՝ առանց պատճառի չէր: Ինչպես Բաբինդերի հայտնաբերած ֆերմանը կմատնանշե, Սուլումանաստրի վանքին շուրջ զետեղված հայերը 1458-են շատ առաջ իրենց եպիսկոպոսն ունեին, ինչ որ կապացուցանե, թե Ս. Գևորգը վաղուց հոգևոր կեդրոն մըն էր հայերուն համար և հոն կնստեի իրենց առաջնորդը զեռ հինին:

Ս. Գևորգը հետևաբար հայոց պատրիարքանիստ եկեղեցին դարձավ, ու Պոլսո հայ գաղութին հոգևոր կեդրոնը գրեթե երկու դար:

Ու բնական էր, որ նույն այդ վանքին շուրջ ստեղծվեր մտավոր կյանք ևս:

Տեսանք, որ Ս. Գևորգի հովանիին տակ, ուրեմն պատրիարքարանի շուրջ մարմին առած ոգևորութեան սույն շրջանակին մեջ,

²⁴³ Ա. Ալպոյանյան, հիշված աշխատութիւնը, էջ 172:

²⁴⁴ Անդ, էջ 173:

²⁴⁵ «Բազմավեպ», 1902, էջ 368:

²⁴⁶ Դոկտ. Վ. Թորգոմյան, հիշված աշխատութիւնը, էջ 229—230:

երկեր հորինված և ընդօրինակված են ձեռագրեր:

Սարգիս դպիր Հովհաննեսյան իր «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ» ձեռագիր երկին մեջ կվկայն տեսած ըլլալ Շնորհալիի «Ողբ Նդեսիոյ» երկի մեկ ընդօրինակութիւնը, որուն հիշատակարանը կրսեր, թե «գրեցաւ երգարանս Տեառն Ներսէսի ի մայրաքաղաքս Ստանբուլ, ի Սուլու մանաստէրս, ընդ հովանեաւ Սրբոյ Գէորգեայ զարավարին, ձեռամբ անիմայ և մեղսամած գրչի Կարապետ երիցու Համշինցւոյ... Թվին ԶԽԲ (1493)»²⁴⁷:

Սամաթիո Ս. Գէորգ եկեղեցւոյ դիվանատան մեջ կազմվեր 1293-ին Կիլիկիա գրված Ավետարան մը, որուն հիշատակարանին մեջ Կարապետ եպիսկոպոս Կաֆայեցի կարձանագրե 1495-ին, թե «զՍ. Աւետարանս որ յիմ հալալ արդեանց գնեցի, և զԱւետարանիչն նկարել տուի և նոր կապել տուի և դրի յիշատակ իմ հոգոյս և իմ ծնողացն ի Ս. Գէորգ տաճարիս որ կոչի Սուլու մանաստիւր»²⁴⁸:

Ջաքարիա Գնունյաց եպիսկոպոսի և Աստվածատուր պատրիարքի պատմերով 1544-ին ընդօրինակված «Ստոյն Կալիսթինեայ Աղեքսանդրի վարուց» մեկ օրինակը, որ կազմվեր Մանչեստրի Ջոն Ռայլոնդս գրավաճառին մոտ, կրսն իր հիշատակարանին մեջ. «Գրեցաւ սա ի Թվին Հայոց ԶՂԳ (1544) ի Սուլի մանաստիւրս, ի բռնապետութեանս սուլտան Սուլէմանին»²⁴⁹:

Ինչպես հիշեցինք, հույները չէին մարսած, որ իրենց համբավավոր մեկ վանքը հայոց ձեռքը շարունակե մնալ, ու փորձեր ըրին քանիցս անոր տիրանալու համար կրկին:

Հայոց ստեղծած հոգևոր այս օջախը կարևոր թաղի մը մեջ, որ Սամաթիան էր, ծուռ աչքով կդիտեին նաև թուրքերը, որոնք նույնպես փորձեր ըրած են նեղելու այնտեղի հայերը:

Թուրք պատմագետ Ահմեդ Ռեֆիք կհրատարակե Սուլթան Սելիմ Բ-ի 972 զիջարդե 3 (1565 հունիս 2) թվակիր մեկ ֆերմանը, որուն համաձայն Սուլտանաստորի հայոց եկեղեցւոյ հոգևորականներուն (ֆեշիշ) դեմ, որ իրենց ունեցած Պատրիարքարանին (ֆեշիշխանե) կողքին նոր շէնք մը ևս ավելցուցած են և պահանջած է անոր քանդուղը: Տեղի ունեցած քննութիւնները ապացուցած են իբրև թե այդ պարագան և հաստատած միևնույն ատեն, թե հայ հոգևորականները կար-

բենան ու նվազածութիւն կընեն իրենց շէնքին մեջ ու կխանգարեն իսլամներուն նամազը: Սուլթանը կհրամայե Պոլսոյ դատավորին՝ ստուգել այս մեղադրանքները և եթե իսկապես ճիշտ են անոնք՝ փլցնել տալ զանոնք, և հայոց վանքին հոգևորականներուն ալ ազդարարել նման արարքներով անհանգիստ չընել իսլամները²⁵⁰:

«Տարակույս չկա, թե հրամանը կգործադրվի, բայց թե գինարբուքը արգիլելու համար տրված խորհուրդներուն կհետևին քեշիշները՝ կարելի է տարակուսել, — դիտել կուտա հայ բանասեր մը»²⁵¹: Արդարև, Սամաթիոյ թաղը հետագային ալ համբավավոր մնաց իր գինետուններով, ուր, ինչպես կվկայե Նրեմիա Չելեպի, կհաճախեին հայ քահանաներ ալ.

«Ուր շատ մէյխանէֆ կային՝ տէրտէրներն աստ մէսքի միտամ»²⁵²:

Սամաթիոյ մոտակա այս գինետուններն մեկուն մեջ է, որ ժէ դարուն սկիզբը Պոլսոյ հայ քահանաները թակարդ պիտի լարեին Հովհաննես Խուլ պատրիարքին: Արդարև, «Պոլսոյ հայ քահանաներ ճնարիւք իմն կտանին զայն նաուլքափուի կողմը դռնվող Արիֆներաց գինետունը, և ենիշերինբու գըլխավորին լուր տալով իրենք խուլս կուտան, մինչ ենիշերինբու եկեղեցական մը գինետունի մեջ տեսնելով, զվարդապետն առնեն քրածեծ, թէպէտ ան կաղաղակեր, թե տեղեակ չէ տեղույս»²⁵³, կամ Չելեպիի իսկ բառերով՝

Տէրտէրքն Խստամպօլոյ՝
հնարիւք տարեալ ընդ մէյխանան,
Ձեռով Յովհաննէս վարդապետն՝
զտեղացին ի բարս շամբշական:
Յանկարծ եէնիշէր աղայն՝
երբ կոխէ տէրտէրքն փախեան,
Չվարդապետն առնեն բրածեծ՝
տեղեակ չեմ տեղույն նա գոշման»²⁵⁴,
Ս. Գևորգը համբավավոր էր նաև իբրև արվեստի կոթող:

Թե ի՞նչ գեղարվեստական բացառիկ արժեք կենեկայացներ պատրիարքանիստ այս եկեղեցին՝ հետագա դարերու ճամբորդներու նոթերին գիտենք, որոնք հիացումով կխոսին արվեստի հրաշակերտներուն վրա, որոնցմով պշնմված էր վանքը:

Պոլսոյ գերմանական դեսպանատան մատրանապետը, S. Von Gherlach, նկարագրելով

²⁵⁰ Ahmet Refik, „On altinci asirda Istanbul hayati“, İkinci basım, 1935, sahife 46—47.

²⁵¹ Հ. Պեքուրյան, «Հանդես ամսօրյա», 1961, էջ 728:

²⁵² Դոկտ. Վ. Թարգոմյան, «Հիշված աշխատությունը», էջ 7:

²⁵³ «Ազգապատում», Բ, էջ 2374:

²⁵⁴ Դոկտ. Վ. Թարգոմյան, «Հիշված աշխատությունը», էջ 6:

²⁴⁷ Դոկտ. Վ. Թարգոմյան, «Հիշված աշխատությունը», էջ 211:

²⁴⁸ Կ. Բասմաջյան, «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, թիվ 25, էջ 4—5:

²⁴⁹ Հ. Ն. Ակիբյան, «Ջաքարիա եպիսկոպոս Գնունյաց», «Հանդես ամսօրյա», 1909, էջ 233:

իր մեկ այցելությունը Ս. Գևորգ եկեղեցին 1577-ին, կրսե, թե «հայերը տարեկան խոշոր գումար մը կվճարեն սուլթանին, որպեսզի կարենան ազատորեն երթնել հոն», ու կպատմե, որ ճաշատան (réfectoire) պատերուն վրա նկարված էին բոլոր առաքյալները, երևելի եպիսկոպոսները, մարտիրոսները, նաև Մեծն Կոստանդիանոսի և մորը՝ Հեղինեի բյուզանդական ոճով խճանկարը²⁵⁵:

Գեուլախ կգրե, թե սույն եկեղեցին Յոթը Աշտարակներեն շատ հեռու է և ձևեն այնպես կհասկցվի, թե մենաստան մը եղած է ժամանակին: Մեծ և ընդարձակ շենք մըն է և բարձր գիրքով ճաշատուն մը ունի: Կոստանդնուպոլսու մեջ էի տեսած նման մեծ շենք մը Այա Սոֆիային դատ: Եկեղեցին բավական մութ է և հոն, որ պետք էր դպիրներու դասին հատկացվի, շինված են երեք իրարմե տարբեր կամարներ, որոնցմե միջինը բոլոր է և բարձր: Խորանին մոտենալու համար պետք է երեք աստիճան բարձրանալ: Խորանին վրա է շինված սեղանը, ուր կա Մարիամ Աստուածածնի պատկերը Հիսուս մանուկը գիրկը: Սույն պատկերին շուրջ քանի մը ուրիշ պատկերներ ալ շինված են: Խորանին վրա գետեղված են ութը-տասը աշտարակներ խոշոր մեղրամոմերով, զորս կվառեն պատարափ: Ժամանակ: Խորանին առջև՝ սալարկված է գետինը և գորգերով ծածկված: Պատարագը մատուցվի խորանին առջև, չորս դպիրներու մասնակցությամբ:

Սիմեոն Լեհացի, որ 1608-ին Պոլիս կգտնվեր, սապես կպատմե իր այցելությունը Սուլումանաստըր՝ «եւ այլ օրն գնացաք ի Սուլումանաստը, որ մերձ է Եօթն Ղուլան, ուր կայ Հայոց մեծ եկեղեցի մի վիմաշէն և գմբէթաձև, թագաւորաշէն, որ կոչի Սուրբ Գէորգ, ի փառաւոր և բարձրաւանդակ տեղոջ և ծովահայեաց... զարմանալի շինուածք էին շուրջանակի՝ դրախտք, պաղլաշք, բուրաստանք, այաղմածք, պարտէզք, մրգաստանք, և ջուրք բարեհամ, և այլ բազում բնակութիւնք կարգաւորաց և աշխարհականաց, եկաց և բնակաց: Եւ կայր ի բարձր տեղ դարպաս մի փոքրիկ, որ հայէր ի վերայ ծովու, յոյժ գեղեցիկ և վայելուշ, ոսկեզօծ և զանազան գեղօք նկարեալ և յօրինեալ պայծառ. և առջև սրճայ մի մեծ թավանլու, սեղանատեղ որ ի շող ժամու և տօթ անդ նստալ որ՝ այլ ոչ կամէր անտի գնալ: Այլ եկեղեցնայ թիկունքն կայր քարուկիւր կամար, նեղ և երկայն... և շուրջ ու բոլորն նկարք պատկերաց Յօղ (318) հայրապետաց և ի գլուխն Քրիս-

տոս և աջմէ Կոստանդիանոս թագաւորն և ծախմէ զշխոյն Հեղինէ որդովքն... այժմ Աթոռ է և Պատրիարքարան Հայոց»²⁵⁶:

Ս. Գևորգը զարգարող գլուխ-գործոցները իրենց կթաշին հետաքրքրությունը ականալնոր դեմքերու:

Սուլեյման Գանունի մասնավոր սեր ուներ նկարչության: Ֆլաման ազնվական մը, de Stochone, որ 1630-ին Պոլիս այցելած էր, կպատմե, թե հայոց պատրիարքին բնակարանի մեկ սրահին մեջ խճանկարված էին եկեղեցական հայրեր, կայսր մը և կայսրուհի մը: Հայերն ըսին իրեն, թե սուլթան Սուլեյման այնքան հետաքրքիր էր, որ հաճախ այդ նկարները դիտելու կուգար»²⁵⁷:

Corneille le Bruyn 1725-ին Պոլիս կատարած իր ուղևորությունը նկարագրելու առթիվ արտատպումներ կրեն M. de Monconis-ի «Ծամբորդություն դեպի Կ. Պոլիս» գործին, որ տեղի ունեցած է 1648-ին, այսինքն 1660-ի մեծ հրդեհին առաջ, երբ դեռ հրո-ճարակ չէր եղած Ս. Գևորգի համբավավոր այդ ճաշատունը իր զմայելի որմանկարներով: Ծաշատան «երկայնությունը, — կգրե Մոնգոնիս, — քառասուն քայլաչափ է և լայնքը՝ ութը: Այստեղ կտեսնվին նկարները շատ մը մենակյացներու, որոնք հոն սրբական կյան մը վարած են: Ասոնք որմանկարի (fresque) ձևով պատերուն երկայնքը շինված են: Անոնց վերևի ծոփորին (frise) վրա ճարտարապետներ նկարված են մինչև իրենց կես մեջքը: Սույն ծոփորին վերի կողմը ուրիշ մը կգտնվի, որ կենդակյացն Սուրբ Կույս Մարիամու կյանքը: Սրահին կամարը կես-գմբեթ մը կձևացնե, ուր խճանկարված է Սուրբ Ընթրիքը. միայն թե գառնուկի տեղ ձուկ մը կա դրված պնակի մը մեջ: Մայրը՝ դեպի դուռը կտեսնվի մեկ կողմը՝ նկարը հույն մեկ կայսեր, իսկ մյուս կողմը նկարը կայսրուհիի մը, և այլն»²⁵⁸:

1643—1644-ին էր, որ հայոց Պատրիարքարանը Սուլումանաստըրեն Քումբափու պիտի փոխադրվեր: Իսկ Ս. Գևորգ, ինքը, հրոճարակ պիտի դառնար 1660-ին:

(Շարունակելի)

²⁵⁶ Սիմեոն Լեհացու «Ուղևորություն», էջ 21—22:

²⁵⁷ Արմենակ Սազրգ, «Նկարչությունը Պոլսու մեջ և Ապտուլյահ Պոլսարի», «Կյանք և արվեստ», Փարիզ, Ա տարի, էջ 83:

²⁵⁸ Voyage de Corneille le Bruyn par la Moscovie, la Perse et aux Indes Orientales, tome I, Paris, 1725.

²⁵⁵ S. Von Gherlach, „Tagebuch“, Frankfurth am Main, 1764, p. 184.